

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE

آزتاك جريدة يومية سياسية وأدبية - الدائرة المسؤولة: إيتا دويشكيان

1500 Լ.Ո. 74ԴԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 225 (20981) ԵՐԵՎԱՆԻ, 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2001 10 ԷՁ

ԼԻԲԱՆԱՆ ՏԱՐԲԵՐ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ԵՐԿԻՐ Է

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

Նախագահ զօր. էմիլ լահուտ երէկ Պէյրուծի փաստաբաններու սենտիքայի նորընտիր նախագահ Ռեմոն Շըտիտն ու խորհուրդի անդամները ընդունած ատեն կոչ ուղղեց սենտիքային՝ հիմնական դեր ստանձնելու օրէնքներու արդիականացման մէջը: «Բոլոր երկիրներու վարկը կախեալ է իրենց դատաւորներու պարկեշտութենէն, եւ անոնց կողքին փաստաբաններն ալ արդարութեան պահպաններ են», նշեց ան, հաւաստելով, որ դատական իշխանութիւնը անկախ է:

Լիբանանի եւ չըբանային իրավիճակին մասին նախագահ Լահուտ ըսաւ, որ այս զգալուն պայմանները կարելի է չըբանցել՝ պահպանելով ներքին կայունութիւնն ու միասնութիւնը:

Ան նաեւ հաստատեց, որ պետութիւնը կարեւոր դեր ունի անհատական ազատութիւններու պաշտպանութեան մէջ՝ օրէնքը յարգելու կոչ ուղղելով բոլորին:

Ապագային զծով լաւատեսութիւն յայտնելով, նախագահ Լահուտ ընդգծեց, որ այս լաւատեսութիւնը յստակ տուեալներու վրայ հիմնուած է:

Հանրապետութեան նախագահը երէկ նաեւ ընդունեց իսլամ - քրիստոնեայ երկխօսութեան ազգային յանձնախումբի անդամներ Մոհամէտ Սամաքը, Ժան Սալմանեանը, Ապու Հալապին, Քամիլ Մընասսան, Միշէլ Իսան եւ Հարէս Շեհապը, որոնք ներկայացուցին յանձնախումբի կազմութենէն՝ 1993էն ի վեր տարած աշխատանքը՝ պահանջելով պետական աջակցութիւն:

Նախագահ Լահուտ դրուատեց յանձնախումբի գործունէութիւնը, որ ցուցարեքած է լիբանանեան համայնքներու սերտ կապը, վստահեցնելով, որ Լիբանան քաղաքակրթութիւններու միջեւ երկխօսութեան լիր է, ինչպէս կը հաստատէ Ֆրանսախօս երկիրներու վեհաժողովը Պէյրուծի մէջ գումարելու որոշումը, իսկ Լիբանանը քաղաքակրթութեանց միջեւ բախումի թատերաբեմ դարձնելու գրաւը ձախողած է:

Հանրապետութեան նախագահը վերահաստատեց, որ Լիբանան կը դատապարտէ եւ կը պաշարի ահաբեկչութեան դէմ, բայց անհրաժեշտ է ընդգծել, որ անիկա տարրեր է դիմադրութենէն:

«Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառներէն մէկն է լիբանանցիներուն միջեւ երկխօսութեան»

Շար.ը՝ էջ 10

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՔԱՆՍՈՅԻ ԵՒ ԱՐԻՏԻ

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի քաղաքական մարմինի մէկ պատուիրակութիւնը երէկ այցելեց հանրօգուտ գործերու նախարար Ալի Քանսոյի եւ տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտի:

Հանդիպումներուն քննարկուեցան երկրին տնտեսական եւ ընկերային իրավիճակը, ինչպէս նաեւ շրջանային եւ միջազգային իրադարձութիւններու անդրադարձը Լիբանանի քաղաքական եւ տնտեսական կացութեան վրայ:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ

ԴԵՍՊԱՆ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԸ



(Լուսանկարը՝ ՐԱՖԳԻ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ)

Երէկ, Հայաստանի եւ Լիբանանի յարաբերութիւններուն վարգացման իր գործն ծառայութեան համար, նախագահ Վոր. Էմիլ Լահուտ, արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտի ձեռնար, Լիբանանի մէջ իր առաքելութիւնը աւարտած Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեանը պարգևատրեց «Մայրիներու Բարձրագոյն Կարգի Ասպետ»ի շքանշանով:

ԻՐԵՒԻ ՀԱԿԱԶՂԵՑՈՒԹԻՒՆ ՊԱՐԵՍՏԻՆԵԱՆ
ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԾԱՆՐՕՐԵՆ ՌՄԲԱԿՈԾԵՑ ԿԱԶԱՆ

ՌԱՇԽԻՆԿՈՐԸ Կ'ԱՐԴԱՐԱՑՆԷ ԹԷԼ ԱՒԻԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Իսրայէլ երէկ խիստ ոճով հակադարձեց պաղեստինեան անձնասպանական գործողութիւններուն՝ ծանր ուժերով ինքնաշարժային տնտեսական կապի մէջ:

Ռմբակոծումի որոշումը տրուեցաւ վարչապետ Արիէլ Շարոնի վերադարձէն ու կառավարութեան արտակարգ հանդիպումէ մը ետք: Շարոն, որ կրճատելով Միացեալ Նահանգներ այցելութիւնը Իսրայէլ վերադարձաւ էր երէկ, անմիջապէս հանդիպում ունեցաւ կարգ մը նախարարներու հետ, ծրագրելու համար շաբաթավերջին Իսրայէլը հարուածած անձնասպանական գործողութիւններուն դէմ որդեգրուելիք միջոցառումները: Անձնասպանական գործողութիւնները 25 քուի եւ արեւի քան երկու հարիւր վիրաւորներ պատճառած էին:

Պաղեստինեան ապահովութեան ուժե-



Կազան ծանրօրէն ուժեղացուցաւ հրդեհ եւ քանդում

ը անմիջապէս ձեռնարկած էին ձեռքարկութիւններու, ըն-

Շար.ը՝ էջ 10

ԳԱՆՏԱՀԱՐ ԾԱՆՐՕՐԵՆ ԿԸ ՌՄԲԱԿՈԾՈՒԻ

Այն պահուն երբ Պոնի մէջ ժողով գումարող աֆղան հատուածները իշխանութեան բաժնեկցութեան գծով երէկ համաձայնութեան մը գոյացման կը մօտենային, ամերիկեան օդանաւերը կը ռմբակոծէին Աֆղանիստանի մէջ թալեպաններու վերջին միջնաբերդը՝ հանդիսացող Գանտար հար թաղաքի մօտակայ վտակներէն եւ ինքնաշարժային տնտեսական կապի մէջ:

Իսկ ցուցանիշով մը, թէ հիւսիսային Աֆղանիստանի մէջ ապահովութեան վիճակը կը վատթարանայ, Մազար-ի - Շարիֆի մէջ հատուածներու միջեւ բախումներ մղած են ՄԱԿը, որ իր միջազգային անձնակազմը քաշէ:

Նոյեմբեր 9ին ուղարկէ

պատերազմի «Իշխան» զօրավար Ապտիլ Ռաշիտ Տոսթուժի կողմէ գրաւուած Մազար - ի - Շարիֆի մէջ բախումները ցուցանիշ էին թալեպաններու դէմ ենթադրաբար իրարու դաշնակից դարձած խմբակներու միջեւ հաւանական տագնապներու:

Երէկ առաւօտուն, աֆղան «Էյ. Այ. Փի.» լրատու գործակալութիւնը հաղորդած է, թէ ամերիկեան ռազմական օդանաւերը հարուածած են նաեւ արեւելեան Թորա Պորա շրջանին մէջ Պըն Լատէի եւ ինքնաշարժային թալեպաններու պաշտպանութեան մէջ 58 հոգի:

Անիկա ըսած է, որ ամերիկեան շուրջ 20 մասնաւորութիւն ուժեր հասած են արեւելեան ձալալապատ թաղաքը, թերեւս Թորա Պորայի

մէջ ցամաքային գործողութիւն մը սարքելու համար:

Մինչ այդ, ցեղախումբերու անդամներ երէկ շարունակած են Գանտահարի օդակայանին վրայ իրենց յարձակումները: Հակաթալեպան փաշթուն ցեղախումբի ղեկավար Կուլ Աղայի բանբերը խալիտ փաշթուն, յայտնած է, թէ սաստիկ յարձակումներ տեղի ունեցած են ցեղախումբերու գինեաններու եւ Պըն Լատէի «Քալիտ» ցանցին հետ կապեր ունեցող արարներուն միջեւ:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փոսթըլ յայտնած է, որ «ժամանակի հարց է միայն» թալեպանները պարտութեան մատնելու եւ Ուսամա Պըն

Շար.ը՝ էջ 2

1700ԱՄԵԱԿԻ ԵԶՐԱԲԱԿԻ ՀԱՆԴՈՒԹԻՒՆ ՀԱԼԵՊԻ ՄԷՋ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԶԽՕՍԵՑԱԻ՝ ԱՅԼ ԳՈՐԾԵՑ, ԶԹԵԼԱԴՐԵՑ՝ ԱՅԼ ԾԱՌԱՅԵՑ

Կ'ԸՍԵ ԱՐԱՄ Ա.

1700ամեակի եպրափալիչ հանդիսութեանց նախագահելու համար Բերիոյ թեմէն ներս Արամ Ա. կաթողիկոս, Շաբաթ, 1 Դեկտեմբեր 2001ի երեկոյեան հանդիսապետեց պաշտօնական ձեռնարկին, որ տեղի ունեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Հանդիսութեան ներկայ էին հայ յարանուանութեանց համալսարանայէտներ, Ազգային իշխանութեան կապներ, Հայաստանի դեսպանն ու Հայկի հիւպատոսը եւ հարիւրա-

ւոր հանդիսականներ: Գեղարուեստական ու դասախօսական յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերին 1700ամեակի «Լուսաւորիչ» յոբելեական երգչախումբն ու հայկապահայ աւուեստագետներ, իսկ բանախօսութեամբ հանդէս եկաւ Գրիգոր վրդկայ էին հայ յարանուանութեանց համալսարանայէտներ, Ազգային իշխանութեան կապներ, Հայաստանի դեսպանն ու Հայկի հիւպատոսը եւ հարիւրա-

երեք մասերու.- ա) Հայ երիտասարդութիւնը այսօր ի՞նչ կացութեան մէջ կը գտնուի: Բ) Հայ երիտասարդութիւնը ինչո՞ւ եկեղեցւոյ կեանքէն կը հեռանայ, Գ) ինչպէս կարելի է իրագործել Հայ եկեղեցւոյ վերանորոգումը:

Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Սուրեն արք. Գաթարոյեան նշեց անցնող հինգ տարիներուն թեմին մէջ ծաւալած 1700ամեակի գործունէու-

Շար.ը՝ էջ 10

ԼԵՆԱՅԻՆ ԴԱՐԱՐԱՂԻ ՏԱԳԵԱՊ

ՄՈՍԿՈՒՎ ԶՕՐԱՎԻԳ՝ ԵՐԵՒԱՆԻ ԵՒ ՊԱՔՈՒԻ ՄԻՋԵՒ ՈՐԵՒԷ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ

Մոսկուայի մէջ կայացած ԱՊՀի վեհաժողովէն Պաքու վերադարձին, Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ անդրադարձած է վեհաժողովին արդիւնքին եւ իր կատարած հանդիպումներուն:

Ալիեւ ղեկավարելու յայտնած է, որ ԱՊՀի վեհաժողովը չէ ընդունած «Լեռնային Ղարաբաղի վայրագ անջատողականութիւնը եւ ահաբեկչութիւնը» դատապարտող փաստաթուղթ մը: «Այս հարցը բարձրացուցած ենք ԱՊՀի բոլոր վեհաժողովներուն ընթացքին, բայց իւրաքանչիւր փորձին ալ հայկական պատերազմները յաջողած է փաստաթուղթերէ դուրս ձգել մեր առաջադրած բանաձեւը: ԱՊՀի անդամ երկիրներու ոչ մէկ ղեկավար զօրակցած է Պաքուի արդար կեցուածքին», յայտնած է Ալիեւ:

Ալիեւ կարեւոր նկատած է ԱՊՀի վեհաժողովին կողքին կայացած «Կողկասեան Քառեակ»ի հանդիպումը: Ազրպէյճանի նախագահը նաեւ կարեւոր նկատած է Քոչարեան - Փութին - Ալիեւ հանդիպումը, հակառակ անոր որ, ըստ Ալիեւի, Հայաստանի եւ Ազրպէյճանի նախագահներուն դիրքորոշումները փոփոխութիւն չեն արձանագրած:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապին, Ալիեւ ազրպէյճանական «Էյ. Էն. Էս.» հեռատեսիլի կայանին յայտնած է, թէ ԱՊՀի Մինսքի խմբակի համաձայնագրէն (Ֆրանսա, Ռուսիա, Միացեալ Նահանգներ) այժմ կը հաւատան, որ Հայաստան եւ Ազրպէյճան իրենք պէտք է հասնին տագնապի լուծման: Ըստ Ալիեւի, նախագահ Փութին վերահաստատելով միջնորդներու այս կեցուածքը, եռակողմանի հանդիպումին ընթացքին յայտնած է, թէ Ռուսիա զօրավիճ է որեւէ համաձայնութեան, որ կը կայանայ Հայաստանի եւ Ազրպէյճանի մէջ:

Միւս կողմէ, ըստ ազրպէյճանական «Պիգիմ Ասը» լրատու գործակալութեան, «Կողկասեան Քառեակ»ի հանդիպումին ընթացքին Ալիեւ նկատած է, որ «հայկական կողմը պատրաստ չէ գիշերներու դիմելու», հետեւաբար մերժած է Մոսկուայի մէջ երկկողմանի հանդիպում ունենալ նախագահ Քոչարեանի հետ:

ՆԱԽԱԳԱՀ ՂՈՒԿԱՍԵԱՆԷՆ ՆԱՄԱԿՆԵՐ ԵԱՀԿԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՒ ՄԻՆԱՔԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ

Պուրէշի մէջ կայացող ԵԱՀԿի արտաքին գործոց նախարարներու խորհրդածողովի նախօրեակին Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկադի Ղուկասեան նամակներ յղած է ԵԱՀԿի գործող նախագահ Միշա ձոնայի, ինչպէս նաեւ ԵԱՀԿի Մինսքի խմբակի համանախագահներ Նիքոլայ Կրիպոքովի (Ռուսիա), Ֆիլիպ Կոէ Սիւրմէի (Ֆրանսա) եւ Ռուտոլֆ Փերինայի (Միացեալ Նահանգներ):

Միշա ձոնայի յղած իր նամակին մէջ նախագահ Ղուկասեան առաջարկած է ԵԱՀԿի հովանաւորութեամբ գործող պատուիրակութիւն մը ուղարկել Լեռնային Ղարաբաղ՝ ստուգելու համար Լեռնային Ղարաբաղի հասցէին ուղղուած ապրիլեանական շինծու մեղադրանքները: Նախագահը յատկապէս անդրադարձած է ահաբեկչներու պատրաստութեան, թմրեցուցիչ վաճառքի եւ քիմիական թափօններու թաղման մասին Լեռնային Ղարաբաղի ուղղուող լեռնային մեղադրանքներուն: Ղուկասեան ընդգծած է, որ ապրիլեանական կողմը հրաժարելով Քարիպի եւ Քի Ուէպի բանակցութիւններու արդիւնքներէն կը դիմէ այնպիսի քայլերու, որոնք կը հակասեն ԵԱՀԿի՝ տագնապը խաղաղ միջոցներով լուծելու սկզբունքին:

«Յոյսով եմ, որ հակառակ ապրիլեանական կողմի հակապնդութեան, որ սովորաբար կը խոչընդոտէ միջազգային պատուիրակութիւններու Լեռնային Ղարաբաղ ուղարկումը եւ ինչ որ ապրիլեանական իշխանութիւններուն թոյլ կու տայ անպատիժ ապաւեղելատուութիւն կատարել միջազգային մակարդակի վրայ, մեր առաջադրող դրական արձագանգ կը գտնէ եւ կ'իրականանայ կարճ ժամանակի ընթացքին», կ'ըսէ Ղուկասեան իր նամակներուն մէջ:

ՆԱԽԱՐԱՐ ՍԱՐԳՍԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԷՎ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան երէկ ընդունեց լիբանանեան բանակի սպայակոյտի պետի տեղակալ Վոր. Յարիս Սուֆիայի զինուորած պատուիրակութիւնը, որ Հայաստան կը գտնուի աշխատանքային այցելութեան մը համար:

Հանդիպումին ընթացքին լիբանանեան կողմը նախարար Սարգսեանին ներկայացուց պատուիրակութեան այցելութեան ընթացքին հայ բարձրագուծան Կիւնուրականներու հետ կայացած քննարկումներու արդիւնքները:

Հայաստանի պաշտպանութեան նախարարը ընդգծեց, որ Օգոստոս ամսուան ընթացքին ստորագրուած հայ - լիբանանեան ռազմական եւ ռազմաարհեստագիտական համագործակցութեան համաձայնագիրը առաւելագոյն չափով պէտք է օգտագործել պաշտպանութեան մարզէն ներս փոխ շահաւէտ գործակցութիւն ստեղծելու համար:

ԿԱՐԶԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԵՐԵՎԱՆԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի երեկ ընդունեց արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտը, որուն հետ քննարկեց ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի թիւ 1373 որոշումի տեսակետը՝ ինչպէս որոշումներ ընդունելու նախարարութեան պատրաստած Լիբանանի պատասխանի նախագիծը:

Համուտ նախանցեալ օր նախագահ Կոր. Էմիլ Լահուտի եւ վարչապետ Ռ. Հարիրիի ներկայացուցած էր պատասխանին ընդհանուր գիծերը: Պատասխանին վերջնական բանաձեւումը կը սպասէ թեքնիք բնոյթի տուեալներ, պորտ կը պատրաստեն պատկան մարմինները, եւ պատասխանը պատրաստ պիտի ըլլայ ՄԱԿի յոռնելու այս շարքովերջին, հաղորդեց Ազգային Լրատու Գործակալութիւնը:

ՖՈՐՄԱԿ

Վարչապետ Հարիրի երեկ նաեւ ընդունեց Լիբանանի մէջ Միջազգային Կարմիր խաչի ներկայացուցիչ Հանրի Ֆորմանի, որ հանդիպումէն ետք յայտարարեց, որ քննարկած են լիբանանեան կառավարութեան եւ Մ. Կ. խաչի գործակցութիւնը բանաւորի պայմաններու բարելաւմին հարցը:

Ֆորմանի ըսաւ, որ այս հանդիպումին չէ արժարժուած իսրայէլեան բանտերու մէջ արգելափակուած լիբանանցիներու հարցը:

Հարիրի երեկ նաեւ ընդունեց Պէքաւի միւֆթի շէյխ խալիլ Մէյսը, երեսփոխան Պահիա Հարիրին, նախարար Նաժիպ Միքաթին եւ աւագ հիւպատոս Ժոզէֆ Հապիսը:

Ղովմի Կուսակցութեան նախագահ Ժարան Արաքժի պատուիրակութեան մը ընկերակցութեամբ այցելեց Հարիրիի եւ անոր հետ քննարկեց երկրի ընդհանուր հարցերն ու շրջանային վարձագումները:

ՄԱՀԱՁԴ

Տէր եւ տիկին Լեւոն Պետիկեան եւ զաւակը
Տէր եւ տիկին Արամ Պետիկեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Համբարձում Պետիկեան

Տիար Հրայր եւ օրդ. Անժէլ Պետիկեաններ
Տէր եւ տիկին Յովհաննէս Դարբինեան

Տէր եւ տիկին Վազգէն Եղեկիւնեան եւ զաւակունք
Պետիկեան ընտանիք
Դարբինեան ընտանիք

Եղեկիւնեան ընտանիք
Ազգաբնիկ ընտանիք
Մեքիսէթեան ընտանիք

Տողրամի ընտանիք
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, եղբոր, մեծ հօր եւ հարազատին՝

ՍԵՂԱԿ ՊԵՏԻԿԵԱՆԻ (Ծնեալ՝ Ալեքսանդրէթ, 1911ին)

Մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 3 Դեկտեմբեր 2001ին երեկոյեան, իր բնակարանին մէջ:

Յուզարկաւորութեան պաշտամունքը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 4 Դեկտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Հայ Աւետարանական Էմմանուէլ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆըրն Շըպլէթի Հայ Աւետարանական գերեզմանատունը:

●Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:
●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Տորա, Փոլիկարպոսի նստակատան կից, Էլիսա Պապիլիսի շէնք, Երեքշաբթի 4, Չորեքշաբթի 5 եւ Հինգշաբթի 6 Դեկտեմբերին:

ՄԱՀԱՁԴ

Պրն. Աւետիս խաչերեան եւ զաւակը
Տէր եւ տիկին Սամսոն եւ Վերա Միքայէլեան

Տէր եւ տիկին Վարդգէս եւ Բերրի խաչերեան
Տէր եւ տիկին Ժան եւ Կրէյս Բամպակեան

Տիկին Վարդուհի խաչերեան եւ զաւակունք
Տէր եւ տիկին Բենո եւ Յամիկ Աշիգեան

Տէր եւ տիկին Կարօ եւ Սոնիա Քիլիճեան
Տէր եւ տիկին Կարօ Գարակէօզեան եւ զաւակունք

Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, զոքանչին, մօրաքոյր եւ հարազատին՝

ԺԱՆԵԹ ԽԱՉԵՐԵԱՆԻ (Ծնեալ՝ Լիբանան, 1944ին)

Մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 20 Նոյեմբեր 2001ին, Լոս Անճելըսի իր բնակարանին մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 26 Նոյեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆորէսթ Լոն, Հոլիվուտ Հիլզ գերեզմանատունը:

●Ներկայ ընդունիլ իբրեւ մահապը:
●Ցաւակցութիւնները կ'ընդունուին Կարօ Գարակէօզեանի բնակարանը, Էլիսա, Չորեքշաբթի, 5 Դեկտեմբերին:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԳՆԱՊԻ ԹՂԹԱԾՐԱՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ուժանիւթի եւ հանրօգուտ աշխատանքներու խորհրդարանական յանձնախումբը երեկ գումարեց ծոցով մը քննարկելու համար էլեկտրականութեան տագնապին պատճառները:

Ժողովին ներկայ գտնուեցան ուժանիւթի նախարար Մոհամէտ Ապտէլ Համիտ Պալտուն, էլեկտրականութեան ընկերութեան ընդհանուր տնօրէն Ժորժ Մուաուատ, ընդհանուր դատախազ Ատնան Ատտուն եւ պետական վարչամէքե-

նային վերահսկող մարմինի նախագահ Ֆուատ Հայտամուն: Ժողովէն ետք յանձնախումբի նախագահ երեսփոխան Մոհամէտ Քապպանի յայտարարեց, որ յանձնախումբը որոշած է այս թղթածրարը փոխանցել պետական վարչամէքենային վերահսկող մարմինին, եւ թղթածրարին երեսփոխաններու ուղղած հարցումները աւելցընելով մարմինէն պահանջեց հետաքննութեան արդիւնքներ հաղորդել Յունուար 2002ին:

Քապպանի նաեւ ըսաւ, որ նախարար Պալտուն պիտի դիմէ

բոլոր անհրաժեշտ միջոցառումներուն կանխարգիլելու համար այս տագնապին կրկնութիւնը:

«Առայժմ էլեկտրականութեան թղթածրարին շուրջ խորհրդարանական քննիչ յանձնախումբ կազմելու տրամադրութիւն չկայ», ըսաւ Քապպանի, յայտնելով որ նախարար Պալտուն Մուաուատ ամբաստանած է աշխատանքը խափանելու յանցանքով, եւ եթէ այս ամբաստանութիւնը հիմնաւորուի, ապա Մուաուատ քրեական հարցով հետապնդու-

Շարք. էջ 9

ԳԱՆՏԱՀԱՐ ԾԱՆՐՕՐԷՆ ...

Ծարուցակուած Ա. ԷջԵԳ

Լատենը գտնելը, դիտել տալով, որ ան կը պահէր արեւելեան կամ հարաւային Աֆրիկայի տարածքներու կամ գիւղերու մէջ:

Նախկին թաղեպան Հաճի մոլլա խաչար, որ կողմ փոխած է, յայտնած է, թէ շարժումին գերագոյն ղեկավարը՝ մոլլա Առհամէտ Օմար, Գանատահարի մէջ մինչեւ մահ պիտի պայքարի եւ անձնատուր պիտի չըլլայ:

Միւս կողմէ, ամերիկեան բեռնատար օդանավներ երէկ յաւելեալ զրահագատ փոխադրականներ եւ հակահրապարակային զենքեր փոխադրած են հարաւային անապատային էջմուշի մը, ուր ամերիկեան ծովուծի հարիւսներ անդամներ հաստատուած են:

Այս վերջինները ոչինչ կ'ըսեն իրենց յարախիշակ գործողութիւններու մասին, սակայն ամերիկեան զադտնի սպասարկութեանց բարձրաստիճան սպայ մը Կիրակի օր յայտնած է, թէ Գանատահարի համար բախումները «զագագ թնկէտ» հասած են:

ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ ԶՎՈՒՆ ՍՕՏԵՑՈՒՄ

Մինչ Մ. Նահանգներ

ԿՈՒՉՈՒԻ

●Քարտուղարուի մը ոսկերչատուն համար: Օտար լեզուներ եւ համակարգիչ գիտնալը պայման: Հեռ. 01-242549:

ԿՈՒՉՈՒԻՆ

●Ինքնաշարժ ունեցող ներկայացուցիչ օրհորներ ըմպելիք ներկայացնելու տուփըմարքէթներու, ճաշարաններու եւ պանդոկներու, Պէրլորթի եւ Լիբանանի ալ շրջաններու մէջ: Հեռաձայնել 03 - 295103 թիւին:

Պրն. Լատենը հալածող իրենց արշաւը կը շարունակէին, աֆրիկայի նախագահ Պուրհանուտին Ռապպանի, որ տակաւին կը ճանչցուի ՄԱԿի կողմէ, կը թուէր աւելի ճկուն մօտեցում մը ցուցաբերել Պրնի խաղաղութեան բանակցութիւններուն:

Բանակցութեանց եօթներորդ օրը աֆրիկայի հատուածներ ՄԱԿի՝ յետթաղեպան կառավարութեան մը հաստատման վերաբերող ծրագիրի մը շուրջ համաձայնութեան մը գոյացման մօտեցած էին:

Ռապպանի բանբերը յայտնած է, թէ Ռապպանի պիտի ընդունի կարելի չորս նշանակեալներէ ունէ մէկը՝ փոխանցման վարչակարգ մը ղեկավարելու համար:

ՄԱԿի բանբեր Ահմէտ Ֆաուզի ըսած է, թէ Պրնի մէջ տակաւին պաշտօնապէս անուններ չեն նշուած եւ ատրկա կը մնայ ամէնէն դժուարին աշխատանքը:

ԱՐԵՎՍԵԱՆ ՕԺԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԵՆՍԱԿԱՆ

Արեւմուտքը շատ աւել-

(ՌՈՅԹԸՐԸ)

ARA TRAVEL

IATA
ԱՆՈՍ

**ARMENIAN AIRLINESի
SALES AGENT,**
ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՅԱՅՏԵ
ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ,
ՈՐ ԿՂԱՐԱՆՈՒԹ

**ՊԵՐՈՒԹ - ԵՐԵՎԱՆ - ՊԵՐՈՒԹ,
ՀԱԼԵՊ - ԵՐԵՎԱՆ - ՀԱԼԵՊ
ԵՒ ԵՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՈՐ ԲԱՂԱՔՆԵՐԸ
ARMENIAN AIRLINES ՕԴԱՆԱԿԵՐՈՒԹ:**
●Օդանաւային տոմսեր ●Ապրանքի փոխադրութիւն

ԱՐԱ ԹՐԱՎԸԼ,
Պուրճ Համուտ, Նամակատան շէնք,
Հեռ. 266594 - 261296 : FAX: 261296

ԵՐԿԱՐԱԶԳՈՒՄԸ

ԸՆԴԱՌԱՋԵԼՈՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԲՈՒՌՆ ՓԱՓԱՔԻՆ,
ԶԵՂԶ - ՎԱՃԱՌՔ ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԶԵԻ
ԶՈՐԵՔԸԸԸԸԸԸ, 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2001

(ՓԱԿՈՒՄ ԵՒ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԺԱՄԸ 19:00ԻՆ)

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ
«ԿԻԼԻԿԻԱ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄՐԱՀԷՆ ՆԵՐՍ

ԱՌԱՌՕՏԵԱՆ ԺԱՄԸ 10:00ԵՆ ՄԻՆԶԵԻ
ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄԸ 7:00:

3,6 ՄԻԼԻԱՌ ՏՈԼԱՐ ԱՐԺՈՂՈՒԹԵԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԳԱԿԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Կառավարութիւնը պատրաստած է 3,6 միլիաւ տոլար արժողութեամբ ընդհանուր բարգաւաճման ծրագիր մը, որուն գործադրութիւնը պիտի տեւէ երեք տարի (2002էն 2004), եւ այս ծրագիրը մօտ օրէն պիտի քննարկուի նախարաց խորհուրդին կողմէ, հաղորդեց երէկ Ազգային Լրատու Գործակալութիւնը:

Ըստ նոյն աղբիւրին, այս ծրագիրէն պիտի օգտուին երկրի բոլոր շրջաններն ու բնագաւառները, եւ ֆինանսաւորումի 57 առ հարիւր պիտի ըլլայ օտար աղբիւրներէ, մինչ մնացած 43 առ հարիւրը պիտի ապահովուի տեղական եւ նախարարութիւններու պիտուէներէ եւ յատկացումներէ:

Ազգային ծրագիրներուն պիտի յատկացուի այդ գումարին 39 առ հարիւրը, Պէրլորթ եւ Լեոնալիքանան նահանգներուն պիտի յատկացուի գումարին 27 առ հարիւրը, հիւսիսին՝ 11,3 առ հարիւրը, հարաւի եւ Նապաթիի՝ 12,3 առ հարիւրը, Պէքաւիի՝ 10,7 առ հարիւրը: Աղբիւրը նկատել տուաւ, որ 1992էն 2001 բարգաւաճումի ծրագիրներու եւ գումարներու միայն 2,5 առ հարիւրը տրամադրուած է Պէքաւիի, 2,6 առ հարիւրը հարաւի եւ 5,3 առ հարիւրը հիւսիսի:

Ա. Լ. Գործակալութիւնը նաեւ յայտնեց, որ երեք տարուան այս ծրագիրի գումարին 37 առ հարիւրը՝ պիտի տրամադրուի ըմպելի եւ ապականած ջուրի ցանցերու եւ աղբերու հարցին, 29 առ հարիւրը՝ ենթակառոցին (էլեկտրականութեան, ճամբաներու եւ մայրուղիներու), 20 առ հարիւրը՝ ընկերային ծառայութիւններու (կրթական, առողջապահական, կենսոլորտային եւ տեղական բարգաւաճման ծրագիրներ): Արտադրողական մարպերուն պիտի յատկացուի ընդհանուր գումարին 14 առ հարիւրը, 6,5 առ հարիւրը՝ երկրագործութեան եւ ոռոգման ցանցերուն, իսկ 7,5 առ հարիւրը՝ սեփական մարպին ու յատկապէս ճարտարարուեստին եւ պրօսպեքտութեան օժանդակելու, ինչպէս նաեւ պետական վարչամէքենան վարձացնելու համար:

Ա. Լ. Գործակալութիւնը նշեց, որ օտար պետութիւններու եւ կապակերպութիւններու հետ արդէն ստորագրուած համաձայնագիրներուն նախատեսուած ծրագիրները այս ընդհանուր ծրագիրի ծախսերուն 50 առ հարիւրը կը ներկայացնեն եւ մնացեալին կէսը՝ 25 առ հարիւրը բանակցութիւններու նիւթ է:

Յ. Յ. Դ. «ԿԱՐՄԻՐ ԼԵՌ» ԿՈՍԻՏԵ - ԱՅՆԵԱՐ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ ՍԱՐԳԻՍ ԶԷՅԹԼԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏԱՆ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 8 Դեկտեմբեր 2001, երեկոյեան ժամը 7:30ին:

ԾԱՆՕԹ.- Զեռնարկին պիտի յաջորդէ Դ. Յ. Դաշնակցութեան 111ամեակին առիթով, ժողովրդային խրախճանք, ժամը 9:00էն սկսեալ, ճաշարան «Արեւ»ի մէջ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԶԵՐԱՆԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՀՐԱԽԵՐՈՎ՝

Առաջին անգամ ըլլալով

ԹԱԹԱ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Շաբաթ, 5 Յունուար 2002, երեկոյեան ժամը 9:30էն սկսեալ, Regency Palace-ի «Jade» սրահին մէջ, Ատմա:

Սակ մէկ անձի՝ 60 տոլար

ԵՐԳԱՀԱՆԴԵՍ

UNESCOի հանդիսաւարաիին մէջ Կիրակի, 6 Յունուար 2002, երեկոյեան ժամը 7:30ին:

Սակ մէկ անձի 10,000 լ.ո.

20,000 լ.ո.

30,000 լ.ո.

SPONSORED BY



ԶՕՐ. Վ. ՓԱՆՔՈՎ
ԱՆԲԱՒԱՐԱՐ ԿԸ ՆԿԱՏԷ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ
ԶՈԿԱՏՆԵՐՈՒՆ ՄԱՐԶՈՒՄԸ

ՀԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՄԻՋ «ՀԱԼՕ ԹՐԱՍԹ»Ի
ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

● **ՄԻԽԻՄ ԿՈՂՄԷ**, «Արմինֆո» լրատու գործակալությանը կը յայտնէ, թէ յետպատերազմեան ժամանակաշրջանին Լեռնային Ղարաբաղի մէջ նկատելի չափով աւելցած է ականներէն եւ այլ պաթլոցիկ նիւթերէ վիրաւորուողներու թիւը: Լեռնային Ղարաբաղի ռմակաւորութեան 6 առ չարիւր չաշանդամ է:

Լեռնային Ղարաբաղի ընկերային ապահովութեան նախարարութեան եւ միջազգային կազմակերպութիւններու կողքին, տեղական բազմաթիւ հաստատութիւններ եւս կը փորձեն հաշմանդամներու հարցերուն լուծումը գտնել: Սակայն անոնց համար արւեստական ոտքերու ապահովումը կը մնայ հիմնական հարց մը: Այս տարի 41 հոգի անվճար կերպով ապահովուած է մարմնի արուեստական անդամներով: Հաշմանդամները նաեւ ստացած են անուաւոր ասթուներ, յենակներ եւ անթացուցիչ:

ԸՍՏ ԱԲՍՏՐԻԱԿԱՆ ՄԷԿ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Այս չորս կորիզային կայանները կը գտնուին երկրաչափային գոտիներու մէջ եւ կը դիմագրաւեն նիւթական եւ ընդհանուր ապահովութեան հարցեր:

Միւս կողմէ, «Արմէնփրէս» կը հաղորդէ, թէ Մեծամոր կորիզային կայանի բարձրաստիճան պաշտօնէներէն մէկը աւստրիական ուսումնասիրութեան Մեծամորին վերաբերող բաժինը նկատած է սխալ: Այս բաժնէն, որ աւստրիական վերոյիշեալ կեդրոնին ներկայացուցիչները ընաւ չեն այցելած Մեծամորի կայանը, որպէսզի կարենան անոր մասին ուսումնասիրութիւններ կատարել: Ան շեշտած է, որ հայկական կորիզային կայանի ապահովութիւնը կը պահպանուին համապէս կերպով:

ՄԻԱՅԵԱԼ ԵԱՀԱՆԳՆԵՐ
ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ՝ ՀԱՅ
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Թայտնենք, թէ Հայաստանի մէջ նման հրատարակութիւն մը կատարուած է քանի մը տարի առաջ:

ԵՐԵՒԱՆԻ .
ՕՓԵՐԱՆ ՊԻՏԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԻ

Վերանորոգումը պիտի կատարուի «Լիմսի» հիմնադրամին կողմէ՝ Ֆինանսաևտոռոգական ծրագրերով մը: «Լիմսի» հիմնադրամը 100 միլիոն տոլար յատկացուցած է Հայաստանի մշակութային հաստատուածքներուն վերակառուցման համար: Կ. Յովհաննիսեան նաեւ ըսած է, որ կառուցման կապալառու գտնելու համար 2002 Ղեկտեմբերին տեղի պիտի ունենայ մրցում մը կը նախատեսուի, որ վերանորոգածն աշխատանքը մարողչանայ՝ ամփոռն ընթացքին:

Վերանորոգում թե՛ աշխատանքները կ'ընդգրկեն զոյգ շէնքերում կեդրոնական ջեռուցման նորոգում թիւնը, օդափոխիչ նորասարքերու գետեղումը ինչպէս նաե՛ք՝ բեմին ներքին յարդարանքներուն նորոգումը թիւնը: Նաե՛կ պիտի արդիականանան յույսի եւ ծայնի սարքաւորումները:

ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ՝
ՄԷՋ՝
ԾՆՈՒՆԴՆԵՐՈՒ
ԹԻԻԻ ԱՃ

Լեոնայի շարաքաղ
վճանակագրութիւններու
պետական արձանագ-
րութեան եւ քննարկում
պետական բաժանմունք
յայտնած է, թէ նոյն ժա-
մանակաշրջանին Լեոնա-
յի շարաքաղի բնակչու-
թիւնը աւելցած է 93՝
հոգիով, որ անցելով տար-
ւան թուայի պատկե-
րէն 27,3 առ հարիւր աւե-
լի է: Աշխատունակ բնա-
կիչներուն թիւը 56,245 է
որուն 51,1 առ հարիւր
ունի անձնական գործ
իսկ անձնական գործ կա-
տարողներուն 94,4 առ հա-
րիւրը կ'աշխատի երկր-
ագործութեան մարզին մէջ

ԾԱԽՈՒ
ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

**ԾԱԽՈՒ
ՅԱՐԿԱԲԱԺԻՆ**

● Զաբլայի շրջանին մեջ
290 բառ. մեքո: Տիւրկերը
ծովահայեաց եւ՝ զեղատե-
սիւ դիրք, 5 մնջասնեմե-
ել կառատուն: Գին
176,000 \$: Դիմել՝ Sodec
Gestion s. a. l.: Հեռ. 01
616000:

Հ.Մ.Ը.Մ. ՊԵՅՐՈՒԹԻ
ՄԱՄՆԱՃԻԻՂԻ ՍԿԱՌԻՏՆԵՐԸ
ՆՇԵՑԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ
ԱՆԿԱԽՈՒԹԻԻՆԸ

Զօր. Փանոս Մանճեան կը ստանայ Բ.Ս.Ը.Ս.
Պէյրուսի մասնաճիւղի յուշանուէրը:

Այս տարի Հ.Մ.Ը.Մ. Պէյրուժի մասնաճիւղի Գ. միաւորի գալլիկներն ու արինները յատուկ ձեւով յիշատակեցին Լիբանանի անկախութիւնը:

22 նոյեմբերին, ժամը 1:30ին, խումբերը մեկնեցան Թանգարանի մօտ գտնուող անյայտ դիրնուորի յուշարձանը, ուր ծաղկեպսակ մը գետեղեցին՝ իբրեւ յարգանք Լիբանանի հանապախուժեան համար զոհ եւածներուն: Ապա ուղղուեցան դէպի ինայտէի բանա՝ կային կեդրոնը, ուր դիմաւորուեցան զօր. Փանոս Մանճեանի եւ զինուորներու կողմէ:



*Սկսածից հետո կեղերունին մէջ շրջագայեցան եւ ծա-
նօթագան հրասարկերուն, գինամթերքներուն եւ այլն:*

Այս այցելությունը մեծ ուրախություն պատճառեց թե՛ սկսուողներուն եւ թե՛ զինուորներուն: Սկսուողները այս առիթով յուշանուէր մը յանձնեցին զօր. փանոս Մանճեանի, եւ շնորհակալութիւն յայտնեցին յանոր՝ իր սիրալիք ընդունելութեան համար:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԺԱՌԱՆ ԳՈՒԹԵԱՆ
ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆԱՐ

Սեմինարիին զլիաւոր զեկուցողն էր մշակութային
 ժառանգութեան պահպանութեան իրաւաբանական
 խորհրդատու, միջազգային իրաւաբան Թովմաս Սա-
 մուէլեան, որ իր ելույթը պատրաստած էր ըստ Հայաս-
 տանի կառավարութեան եւ մշակութային ղեկավա-
 րութեան հետ ունեցած հարցազրոյցներու, ինչպէս
 նաեւ եւրոպական ու միջազգային չափանիշներու եւ
 համաձայնագիրներու՝ կատարուած Հայաստանի
 օրէնքներու վերլուծութեան հիման վրայ:

Քննարկում եցան մշակութային ժառանգությունների պահպանություն, ճամբար որդեգրությունից չափանիշներ, լույսիչ անաեւ ժառանգությունից գոյաբարգրում, դասակարգում, ազգային ինքնագիտակցություն եւ մշակութային գրգռանքը ծախսեր, առանձնաշատակութիւններուն առնչուող չարքեր:

Զեկուցումներ ներկայացուեցան նաև օտար մասնազգեսներու կողմից, որոնք դիտել տուին, որ Հայաստանի ունի մշակութային հարուստ ժառանգություն, եւ Հակառակ երկրին դիմագրաւած տնտեսական տագնապին, այդ ժառանգութիւնը կարելի եղած է պահպանել՝ շնորհիւ բարձրորակ մասնազգեսներու տաղանդին եւ նուիրումով ծնան:

Սեմինարի ընթացքին քննարկուեցան նաեւ Հայաստանի մէջ եւ անկէ դուրս գտնուող հայկական մշակութային արժէքներու պաշտպանութեան եւ պահպանման վերաբերող հարցեր:

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՅԻՆ ԺԱՄԱՆ 5:00:

ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի փնջել ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԵՐՍԷՍ
ՊԵՏՐՈՍ ԺԹ. ՊԱՏՐԻԱՐԺԸ
ՊԱՐԳԵՒԱՏՐԵՅ ԴԵՍՊՈՎՆ
Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԸ**

Շարաթ, 1 Դեկտեմբերի երեկոյան ժամը 6:00ին, Հայ կաթողիկէ պատրիարքարանին մէջ Ներսէս Պետրոս ԺԺ. պատրիարքը «Սուրբ Մեսրոպ»ի շքանշանով պարգեւատրեց Լիբանանի մէջ Հայաստանի արտա-կաղ բեւ լիազօր դեսպան Արման Նաւասարդեանը, որ աւարտած է Լիբանանի մէջ իր դեսպանական առաքելութիւնը:

Ներկայ էին պատրիարքական ընդհանուր փոխանորդ Վարդան եպոս. Ազգաբեան, երեսփոխաններ Ժան Օղասապեան եւ Սերժ Թուրսարգիսեան, նախկին նախարար Ժաք Զուխատարեան, ինչպէս նաեւ հայ կաթողիկէ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Խօսքը առաւ Վարդան եպօս. Աշգարեան, որ Հաստա-տելով Հայաստանի անկախութեան պահպանման եւ Հայ Դատի պահանջատիրութեան հետ ապստամբ ան-հրաժեշտութիւնը, ըսաւ. «Մենք մեր ձեռքը դրանք Եռագոյնին, կը գոչենք. Յաւիտեանս քեզի հետ ենք Հայաստանը»: Ան խորիցք դեսպան Ա. Նաւասարդեա-նէն, որ այս տրամադրութեան պատգամաբերը դառ-նալ Հայրենիքի մէջ:

Ապա կարողացանք ներսէն Պետրոս ԺԹ. պատ-
րիարքի օրհնութեան գիրը, որ զմահատելէ ետք Հա-
յաստանի Սփիւռք յարաբերութեան սերտացման մէջ
դեպքան Ա. Նաւասարդեանի դերակատարութիւնը,
զայն արժանի համարեց «Սուրբ Մեսրոպ»ի շքանշա-
նին:

Շքանշանին տուգնութենէն ետք խօսք առաւ դեսպան Ա. Նաւասարդեան: Շնորհակալութիւն յայտնելով, ան բարձր գնահատեց վերջին երեք տարիներուն ընթացքին Հայ կաթողիկէ պատրիարքութեան եւ Հայաստանի դեսպանատան փոխյարաբերութիւնները: Դեսպանը նաեւ արժեւորեց Լիբանանի եւ ընդհանրապէս Սփիւռքի մէջ Հայ կաթողիկէ պատրիարքութեան շանգամանքը, ան նաեւ արժեւորեց վերջին տարուան ընթացքին Հայաստան-Հոռմ յարաբերութիւնները, որոնք յատուկ կարեւորութիւն ստացան յատկապէս 1700ամեակի ծիրին մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ԴՐԱՄԱՏՈՒՆԸ ՊԻՏԻ
ՊԱՅՔԱՐԻ ԿԱՍԿԱԾԵԼԻ
ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐՈՒ ԴԷՄ

«ԼԻՆՍԻ» ԸԻՄՆԱԴՐԱՄ

«ԼԻԳԱ» Հիմնադրամը Հայաստանի ճանապարհահանդիմանական համար տրամադրած է 38 միլիոն տոլարի դրամապահույճ, որով պիտի իրականացուին միջպետական նշանակություն ունեցող 300 ֆիլմերի ծածկաներով փերմանորդման, փերականգնողման եւ նոր շինարարությունների աշխատանքներ:

Հստ ճանապարհաշինույթեան ծրագիրը իրականացման գրասենեակի տնօրէն Էտուարտ Բեզոյեանի, ծրագիրը սկսած է յս տարուէն էւ պիտի աւարտի 1 Նոյեմբեր 2003ին:

Այս տարուան ընթացքին նախատեսուած է վերանորոգել 35 քիլոմետր ճամբայ. արդէն աւարտած է իջեւանէն դէպի Նոյեմբերեան տանող ճամբուն առաջին հատուածին վերանորոգումը (13,1 քիլոմետր), մօտ օրէն պիտի աւարտի Դիլիջան-Վանաձոր մայրուղիին առաջին եւ երկրորդ հատուածներուն վերանորոգումը: Մալիշկա գիւղի՝ 1,3 քիլոմետր ճամբան: Պիտի կառուցուի նաեւ Արգաւանդի փոխադասական ճանգոյցը: Վերջինս, եթէ եղանակները նպաստաւոր ըլլան, ապա գործածութեան պիտի դրուի մինչեւ տարեկան քաղաքացիական ծախսերի օրինակ:

«ԱԶԴԱԿ»Ի
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐԺԷՔԱԻՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Երեւանի համալսարանի հրատարակչութիւնն ընթերցողի գոտին յանձնեց փիլիսոփայական գիտութիւնների գոլտոր, փրոֆեսօր Հրաչիկ Միրզոյեանի աւելի քան քսանհինգամեայ գիտական պրպտումների ու որոնումների ծնունդ «Յովհաննէս Մրքուզ Զուղայեցի» մենագրութիւնը՝ նուիրուած 17րդ դարի վերջի եւ 18րդ դարի սկզբի հայ փիլիսոփայութեան եւ հոգեւոր մշակոյթի ամենաականաւոր դէմքերից մէկին:

Մենագրութեան «Մուտք»ի մէջ հեղինակը գրում է, որ Յովհաննէս Զուղայեցու մասին առաջին հրապարկումն ինքը կատարել է դեռեւս 1976 թուականին, որին յաջորդած՝ նրա կեանքի, գործունէութեան ու գրական ժառանգութեան, ինչպէս նաեւ տրամաբանական, հասարակական-քաղաքական հայեացքների լուսաբանմանը նուիրուած շուրջ մէկուկէս տասնեակ յօդուածներով, ինչպէս նաեւ «17րդ դ. հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծութիւն» (Երեւան, 1983 թուական) մենագրութեան համապատասխան բաժիններով նախապատրաստել եւ հիմք է ստեղծել սոյն մենագրութեան համար:

Հեղինակը նպատակ է ունեցել ամբողջականացնել ականաւոր փիլիսոփայի, տրամաբանի, քերականի, գեղանկարչի եւ արուեստաբանի կերպարն ու աշխարհայեացքը, եւ այս տեսանկիւնից աշխատութիւնը մեծ արժէք է ներկայացնում ինչպէս տուեալ պատմաշրջանի հայ իրականութեան, այնպէս էլ դարաշրջանի գիտամշակութային երեւոյթների ուսումնասիրութեան համար:

Զուղայեցին թողել է հարուստ գրական ժառանգութիւն, որը, ցաւօք, ամբողջութեամբ չի պահպանւել: Դրանց մի մասը այրել են ժամանակի խաւարամիտ կղերականները, մի մասը քայքայուել եւ ոչնչացել է ժամանակի ընթացքում, եւ մեզ հասել է այդ ժառանգութեան փոքր մասը: Ընդ որում, մեծապէս տուժել են նաեւ Զուղայեցու պահպանուած աշխատութիւնները, յատկապէս նրա ձեռագրերը: Իսկ պարսկերէն եւ արաբերէն գրուած աշխատութիւնները կամ ոչնչացել են ամբողջութեամբ, կամ պահպանուել են պարսկական կամ այլ դրողարաններում եւ սպասում իրենց սրտացաւ հետազոտողին: Մենագրութեան հեղինակի կարեւոր ծառայութիւններից մէկն էլ այս տեսանկիւնից այն է, որ կարողացել է երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան ձեռագրատանը յայտնաբերել Յովհ. Զուղայեցու երեք աշխատութիւններ, որոնք մինչ այդ յայտնի չէին ուսումնասիրողներին:

Մշակութային նշանաւոր գաղթօճախ էր Նոր Զուլան, որտեղ ապրեցին եւ ստեղծագործեցին այնպիսի նշանաւոր դէմքեր, ինչպիսիք են՝ Միմէռն, Ստեփաննոս, Ալեքսանդր Զուղայեցիները եւ ուրիշներ, որոնք դարձան հակամիաբանական պայքարի առաջամարտիկները, որոնց գործը հետագայում շարունակեց Յովհ. Զուղայեցին: Նրա գրեթէ բոլոր աշխատութիւնները, անկախ դրանց բնոյթից, համակուած են հակամիաբարական պայքարի ոգով եւ պաշտպանում են հայ եկեղեցու եւ դաւանանքի, հետեւաբար, նաեւ հայ ժողովրդի ինքնորոշոյն գոյութեան իրաւունքը: Յատկապէս ուշագրաւ է Յովհ. Զուղայեցու այն միտքը, որ յաճախ այնքան ուժեղ է քրիստոնէական յարանուանութիւնների միջեւ ատելութիւնն ու չարութիւնը, որ մէկը միւրի գրոյթները մերժելու համար մերժում են նոյնիսկ համաքրիստոնէական յայտնի ճշմարտութիւնները: Յովհաննէս Զուղայեցին բանավիճել է ոչ միայն հակամիաբարականների, այլեւ պարսից իմաստունների եւ աստուածաբանների, ինչպէս նաեւ Սուլէյման եւ Հիւսէյն շահերի հետ: Պարսից շահերի, իմաստունների ու աստուածաբանների հետ Զուղայեցու ունեցած բազմաթիւ ու տարաբնոյթ վէճերի արդիւնքը եղաւ այն, որ «փափկացրեց նրանց կարծրացած սիրտը մեր հանդէպ»:

Ի տարբերութիւն խորհրդային տարիներից ժառանգութիւն մնացած աւանդույթի, հեղինակը Զուղայեցու փիլիսոփայական հայեացքները քննում է ոչ թէ գոյաբանութիւն-իմացաբանութիւն-տրամաբանութիւն-բարոյագիտութիւն-գեղագիտութիւն-հասարակական-քաղաքական տեսութիւն համակար-

գով, որտեղ հիմնական շեշտը դրոււմ էր փիլիսոփաների կամ փիլիսոփայական դպրոցների նկեթապաշտական կամ գաղափարապաշտական ուղղուածութեան վրայ եւ ըստ այդմ մշակուում էր համապատասխան վերաբերմունք՝ բանալի ունենալով նրա հասարակական-քաղաքական հայեացքները: Քանի որ, ըստ հեղինակի, «անցեալի մտածողների իրական մեծութիւնը որոշելու համար նրանց հասարակական-քաղաքական հայեացքների ուսումնասիրութիւնը ոչ պակաս կամ գուցէ աւելի կարեւոր է, քան գոյաբանական, իմացաբանական հայեացքների ուսումնասիրութիւնը»:

Հեղինակը Յովհ. Զուղայեցուն ներկայացնում է որպէս ձեւաւորուող հայ քաղքենիութեան գաղափարախօս: Նա չի բաւարարուում տիրող աւատապետական յարաբերութիւնների, իշխող կամայականութեան ու անձնիշխանութեան հետեւեւեղով կոպտօրէն ոտնահարուող մարդու իրաւունքների քննադատութեամբ եւ հանդէս է գալիս մարդու իրաւունքների պաշտպանութեամբ: «Մարդն ինքնիշխան է, քանզի նրա կամքն անօտարելի է: Երկային ոչ մի ուժ, այդ թւում աշխարհի ամենահզօր ինքնակալն անգամ, որքան էլ ցանկանայ, չի կարող նրան երկել իր ազատ կամքից»:

Հասարակութիւնն, ըստ Զուղայեցու, նման է կենդանի օրկանիզմի: Ինչպէս առողջ մարմնի բոլոր անդամներն են դոնուում կատարեալ ներդաշնակութեան մէջ, այդպէս էլ առողջ հասարակութեան բոլոր անդամներն ու դասերը պէտք է անձնական օրինակ ծառայեն իշխաններն ու հոգեւոր հայրերը:

Հեղինակն իր մենագրութեան «Յաւելուած» բաժնում ներկայացրել է Յովհ. Զուղայեցու բնագիրներից հատուածներ, որն ընթերցողին հնարաւորութիւն է տալիս ծանօթանալ ոչ միայն Զուղայեցու տրամաբանական, քերականական եւ գեղագիտական ըմբռնումներին, այլեւ նրա մտածողութեան ոճին, առանց միջամտութեան: 17-18րդ դարերի հայ իրականութիւնը հարուստ է խոշոր ներկայացուցիչներով, եւ նրանցից իւրաքանչիւրը կարօտ է նուիրեալ հետազոտողի: Սակայն, պիտի նկատենք, որ հէնց այս ժամանակաշրջանն է, որ ամէնից քիչ է ուսումնասիրուած: Յանկանանք, որ ստեղծուի այս ժամանակահատուածը ուսումնասիրող պատմափիլիսոփայական դպրոց:

ԵՌԻՐԻ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
Փիլիսոփայական գիտութիւնների
թեկնածու

«Հայաստանի Հանրապետութիւն»

ԱՐԺԷՔԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
ԽԱԶԵՐԻ
ՅԱՅՏԵՆՈՒԹԻՒՆԸ

Յայտօր հայ գիտական հասարակութեանը յայտնի էր, որ Կոմիտասն ի վերջոյ գտաւ հայ միջնադարեան նոթագրութեան՝ խազերի բանալին, սկսեց կարգաւ պարզ շարականները, սակայն ՄԺԵ Եղեռնի տարիներին Կոմիտասի այլեւայլ ձեռագրերի հետ կորան նաեւ խազերի վերծանութիւնները, կորաւ խազերի բանալին:

Եւ ահա յայտնաբերուել ու հրատարակուել են այդ բացառիկ ձեռագրերը, եւ, փաստօրէն, արդէն 300 տարի անընթեան ի համարուող խազերը դարձել են ընթեանքի՝ Կոմիտասի վերծանութեան շնորհիւ: Երաժշտագէտ Արթուր Շահնազարեանը, երկար տարիներ ուսումնասիրելով Կոմիտասի անտիպ ձեռագրերը, ի մի բերելով եւ դասակարգելով Կոմիտասի խազաբանական գրաւուածները, պարզեց, որ ոչ միայն պահպանուել է Կոմիտասի յայտնաբերած խազերի բուն բանալին, այլեւ պահպանուել են առանձին խազերի եւ նոյնիսկ շարականների վերծանութիւններ: Կոմիտասը համոզիչ կերպով ներկայացնում է իր յայտնագործութիւնը. տալիս է խազերի վերծանութեան բանալին, վերծանութեան սկզբունքը եւ վերծանութեան օրինակներ:

Մեր երգերը խաղաւորուել են հազար (եւ աւելի) տարի առաջ (որպէսզի չենթարկուեն բանաւոր աղաւղման), սակայն զանազան պատճառներով 16րդ դարի կէսերից դարձել են անընթեան, եւ երգերը, բանաւոր փոխանցուելով, ենթարկուել են աղաւաղման:

Այսօր Մաշտոցի անուան Մատենադարանում 350ից աւելի շարակնոց գրքերը, 100ից աւելի տաղարանները, գանձարանները եւ այլ երգարաններ խաղաւորուած պահպանում են մեր հազարամեայ երաժշտութիւնը: Միայն շարակնոցը բաղկացած է հազարից աւելի երգերից:

Ի դէպ, խազերի այս դիւտը համաշխարհային նշանակութիւն ունի նաեւ այն պատճառով, որ հնարաւոր է լինելու դրա միջոցով ուսումնասիրել ընդհանուր պաշտպանական, բնականական եւ, մասնաւորապէս, յունական միջնադարեան երաժշտութիւնը, որովհետեւ հայ ձեռագրերը պահպանել են նաեւ յունական երաժշտութեան օրինակներ՝ գրանցուած մեր խազերով:

Գրքի հրատարակութիւնը հովանաւորել է Մեսրոպ արք. Աշեւեանը: Կրկին նրա հովանաւորութեամբ առաջիկայում տեղի կ'ունենայ համերգ (խմբավար-Յարութիւն Թոփիկեան), եւ առաջին անգամ անխթար կերպով կը հնչեն խազերից վերծանուած մեր վեհափառ, հինաւուրց շարականները:

3. ԹՈՓԻԿԵԱՆ

«Հայաստանի Հանրապետութիւն»

ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԵՋ

ՀԱՅԱԳԵՏ ՖՐԱՆՑ ՆԻՔՈԼԱՈՒՍ ՖԻՆԷ

«Ամէն լեզու միտքերու բացատրութեան պարզ գործիք մը ըլլալէ բացի, ունի աւելի հիմնական գորութիւն մը՝ միտքը շղթայակապ կաշկանդելու, բայց նաեւ գորութիւն մը՝ զայն բարձրաթիչ սաւառնեցնելու: Ըստ այսմ, ամէն լեզու թարգմանէ միանգամայն այդ ազգի հոգեկան գարգացման եւ հոգեկան սեփականութեան, որոնք եթէ ոչ ամբողջապէս, ապա եւ պէս խօսակցութեան մէջ կ'արտայայտուին»:

Ֆ. Ն. Ֆինք

Գերմանացի արեւելագէտ գիտնական Անտոնիոս Աբուլութուս (1654-1704), որ հայ լեզուն ուսումնասիրող առաջին գերմանացին է, լրջօրէն զբաղած է հայերէն լեզուի ուսումով: 1680ին Լայփցիգի մէջ ան հրատարակած է առաջին հայերէն-լատիներէն գիրքը «Abdias Armenus», 56 էջ: Աբուլութուս իր այդ հրատարակութեան կցած է նաեւ յառաջաբան, ներածութիւն, զանազան կարգի մեկնութիւններ ու բացատրութիւններ, հայերէն այբուբենի ցանկը եւ այլն:

Յառաջաբանը կը վերջանէ հայ ազգի համար գնահատական տողերով եւ սա ըստբմաղթութեամբ. «Աստուած շատ հեռու ինկած, անթիւ գայլերով շրջապատուած եւ անհամար բարբարոսներով պարփակուած հօտը ամէնողորմ գթութեամբ զերծ պահէ լեզունա-միներու յարձակումներէ ու խտուծութիւններէ»:

Այս գիրքէն հետ մը տեսած է այս տողերուն հեղինակը՝ Հայէն քաղաքի Մարթին Լութէր համալսարանին եւ Եոհաննէս Լեփսիուսի արխիւին մէջ, ուր կայ նաեւ հայերէն Աւետարան մը՝ գրուած Վասպուրականի մէջ՝ 1224ին: Անորէն Աբուլութիւնն ետք ծայր տուել հայ գերման մշակութային յարաբերութիւնները:

Ամսթերտամի մէջ Զուլիաս Վանանդեցին, որ կը տիրապետէր լատիներէն եւ արեւելեան լեզուներու, կը թարգմանէ եւ կը գրէ քանի մը գիրքեր, որոնց շարքին՝ «Գանձ չափուու, կշիռներու եւ դրամներու բոլոր աշխարհի»:

Զուլիաս Վանանդեցիի օգնութեամբ գերմանացի նշանաւոր լեզուաբան Եոհանն Երէտտը (1680-1756) Ամսթերտամի մէջ 1771ին կը հրատարակէ իր «Գանձ Արամեան լեզուի» վերնագիրով ուսումնասիրութիւնը: Ան ունի նաեւ ձեռագիր բաւարան մը հայ լեզուի, որ կը մնայ Գերմանիոյ Քասսել քաղաքի մատենադարանին մէջ:

1910ի Մայիս 4ին Պերլին մէջ 43 տարեկան հասակին ամացաւ լեզուաբան եւ հայագէտ փրոֆ. դոկտ. Ֆ. Ն. Ֆինք: Մնած է 1867, Ռուսիոյ 26ին, Գերմանիոյ Քրեֆէլտ քաղաքին մէջ. սկզբնական կրթութիւնը ստացած է տեղւոյն գիմնազիոմին մէջ:

Ջրաղած է լեզուագիտութեան, ռուսաւ Միւնխի, Փարիզի եւ Մարպուրկի համալսարաններու մէջ եւ 1895ին ստացած է դոկտորական աստիճան:

1900ին կ'երթայ Կովկաս՝ հմտասարւել եւ ուսումնասիրելու համար կովկասեան լեզուները, ուր կը մնայ երկու տա-

րի՝ էջմիածին եւ Թիֆլիս: 1903ին կը կարգուի Պերլինի համալսարանի ընդհ. լեզուագիտութեան դասախօս, միեւնոյն ժամանակ նաեւ՝ Պերլինի Արեւելեան լեզուներու սեմինարին մէջ ովկիանեան լեզուի ուսուցիչ: Չորս տարի ետք կը ստանայ փրոֆեսօրի տիտղոս, իսկ երկու տարի ետք կը դառնայ համալսարանի ընդհ. լեզուագիտութեան արտաքին տեղգի ուսուցչապետ, պաշտօնը կը պահէ մինչեւ իր մահը:

Ըստ Վիեննայի Միւլիթրեաններու մայրաւանքի հայագէտ եւ հոգեւորական գիտնական Նին՝ հայը Ներսէս Ակինեանի, «Ի սկզբան, երբ չէր կոխած տակաւին լեզուագիտութեան ճանապարհը, սիրած էր բնութեան վառ հասակին քնարեղական բանաստեղծութիւնը եւ իւր առաջին փորձերը՝ «Gedichte», Krefeld 1891; «Von der Riviera», Munchen 1891, «Eun Traumgesicht»-1891, իտալական ճանապարհորդութեան ազդեցութեան վառ հասակին քնարեղական բանաստեղծութիւնը:

Հայերէն լեզուով՝ Ստեփան Մախասեանի «Մի. անկատուութիւն Փաւստոսի պատմութեան մասին», գերմաներէն՝ Ֆրանց Ն. Ֆինքի «էջմիածին մատենադարանի մէջ գտնուած մի հաւաքական ձեռագիր», գերմաներէն՝ Եղեռնի վրդ. Գեանդեցեանի լեզուագիտական յօդուածը գերմաներէն՝ Հ. Աճառեանի յօդուածը «Վանի բարբարոս չնչինարտութեան», գերմաներէն՝ Կոմիտաս վարդապետի յօդուածը «Հայ ժողովրդական պարերի մասին»:

Այս հայագիտական հանդէսը ունեցաւ երեք տարուած կենդեք մը, լոյս տեսած է երկու հատոր, ութը տետրեր, վերջին տետրը լոյս տեսած է 15 Ապրիլ 1904ին Մարպուրկի մէջ: Ֆինքի փափաքն էր եւրոպացի հայագէտներուն ուշագրութիւնը հրաւիրել հայերէն ուսման կարեւորութեան վրայ եւ կեդոնացնել Եւրոպայի հայագէտներու ուժերը: Ան իր շուրջ հաւաքեց նշանաւոր լեզուաբաններ՝ Քարաթ, Ս. Պուկկի, Եմիթ, Հիւպչման, Կեցեյ եւ շատ ուրիշներ:

Հանդէսի վերջին համարի երկրորդ էջին վրայ գրուած է խմբագրութեան եւ հրատարակչական տան կողմէ հետեւեալ յայտարարութիւնը, «Յաւում ենք «Հայագիտութեան Հանդէս» հրատարակութեանը առ այժմ գաղութները, որովհետեւ ձեռնարկութեան սկզբում նկատական օժանդակութիւնը մեզ վստահօրէն խոստացուած չափով չտրուեցաւ եւ առանց այդ տեսակ միջոցի՝ գոնէ այժմ անհնար է ծախքեր ծածկել»:

Փրոֆ. դոկտ. Ֆրանց Ն. Ֆինք բազմաթիւ գրութիւններու հեղինակ է, բանաստեղծական, լեզուագիտական եւ հայագիտական բովանդակութեամբ: Իր «Արեւելեան Հայոց Լեզուի» գիրքին մասին այսպէս կը բացատրէ. «Արեւելեան հայոց լեզուն, որ որչափ ալ երեւանի գաւառաբարբառի վրայ հիմնուած է, մեծապէս ազդուած է արուեստական կերպով պահպանուած հին հայերէնէն: Այս լեզուն իր այժմեան կերպարանքն առած է Արեւեանի ուղի հարթող գործունէութեանց ետքը գլխաւորաբար Սո. Նազարեանի, Միքայէլ Նալբանդեանի եւ Ռաֆայէլ Պատկանեանի ձեռքը»:

պատմութեան:

Ֆրանց Ն. Ֆինքը Կովկաս գտնուած ժամանակ Թիֆլիսի մէջ Արգար Յովհաննիսեանի մասնակցութեամբ եւ էջմիածինի ճեմարանի դասախօսներ՝ Եղեռնի վրդ. Գեանդեցեանի եւ Յակոբ Մանանդեանի հետ միասին կը հրատարակէ «Հանդէս Հայագիտութեան» եռամսեայ պարբերականը, առաջին տետրը լոյս կը տեսնէ Գերմանիոյ Մարպուրկ քաղաքին մէջ, 30 Հոկտեմբեր 1901ին, 96 էջ: Հայագիտական այս հանդէսը եղած է բաւարան բազմաբովանդակ, այնտեղ գետեղուած են ոչ միայն լեզուագիտական, այլեւ գրականական պատմական, աշխարհագրական եւ այլ ուսումնասիրութիւններ՝ ինչպէս հայերէն, նոյնպէս ալ եւրոպական գաւառացի լեզուներով:

Հայերէն լեզուով՝ Ստեփան Մախասեանի «Մի. անկատուութիւն Փաւստոսի պատմութեան մասին», գերմաներէն՝ Ֆրանց Ն. Ֆինքի «էջմիածին մատենադարանի մէջ գտնուած մի հաւաքական ձեռագիր», գերմաներէն՝ Եղեռնի վրդ. Գեանդեցեանի լեզուագիտական յօդուածը գերմաներէն՝ Կոմիտաս վարդապետի յօդուածը «Հայ ժողովրդական պարերի մասին»:

Այս հայագիտական հանդէսը ունեցաւ երեք տարուած կենդեք մը, լոյս տեսած է երկու հատոր, ութը տետրեր, վերջին տետրը լոյս տեսած է 15 Ապրիլ 1904ին Մարպուրկի մէջ: Ֆինքի փափաքն էր եւրոպացի հայագէտներուն ուշագրութիւնը հրաւիրել հայերէն ուսման կարեւորութեան վրայ եւ կեդոնացնել Եւրոպայի հայագէտներու ուժերը: Ան իր շուրջ հաւաքեց նշանաւոր լեզուաբաններ՝ Քարաթ, Ս. Պուկկի, Եմիթ, Հիւպչման, Կեցեյ եւ շատ ուրիշներ:

Հանդէսի վերջին համարի երկրորդ էջին վրայ գրուած է խմբագրութեան եւ հրատարակչական տան կողմէ հետեւեալ յայտարարութիւնը, «Յաւում ենք «Հայագիտութեան Հանդէս» հրատարակութեանը առ այժմ գաղութները, որովհետեւ ձեռնարկութեան սկզբում նկատական օժանդակութիւնը մեզ վստահօրէն խոստացուած չափով չտրուեցաւ եւ առանց այդ տեսակ միջոցի՝ գոնէ այժմ անհնար է ծախքեր ծածկել»:

Փրոֆ. դոկտ. Ֆրանց Ն. Ֆինք բազմաթիւ գրութիւններու հեղինակ է, բանաստեղծական, լեզուագիտական եւ հայագիտական բովանդակութեամբ: Իր «Արեւելեան Հայոց Լեզուի» գիրքին մասին այսպէս կը բացատրէ. «Արեւելեան հայոց լեզուն, որ որչափ ալ երեւանի գաւառաբարբառի վրայ հիմնուած է, մեծապէս ազդուած է արուեստական կերպով պահպանուած հին հայերէնէն: Այս լեզուն իր այժմեան կերպարանքն առած է Արեւեանի ուղի հարթող գործունէութեանց ետքը գլխաւորաբար Սո. Նազարեանի, Միքայէլ Նալբանդեանի եւ Ռաֆայէլ Պատկանեանի ձեռքը»:

ՀԱՍՈ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Հ.Յ.Դ. ԼԵՄԻ

2002Ի ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՑԸ



Հ.Յ.Դ. ԼԵՄԻ



ՀԱՅ ԴԱՏ

ԱՖԴԱՆԻՍՏԱՆԻ ԴԵՊԵՏՐՈՒՆ
Մ. ՆԱԿԱՆԳՆԵՐՈՒ ԿՈՂԶԻՆ
ԿԱՆԳՆԱԾ ԸԼԼԱՆՈՒՆ ՀԱՄԱՐ

ԱԶՐՊԻՅՃԱՆ ԿԸ ՅՈՒՍԱՅ ՏԱՐԵԿԱՆ 100 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԻՆ

Ազրպեյճանի արտաքին գործոց նախարար Վիլայեթ Կուլիեև համոզուած է, որ չուտով Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ կերը նական որոշում պիտի տայ թիւ 907 Յօդուածի կառնեցման մասին:

Ազրպեյճանի խորհրդարանի արտաքին յարաբերութիւններու յանձնարարութիւն փոխ նախագահ Կիւլեթքին Հանիեւա, որ նաեւ եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին մէջ ազրպեյճանական պատուիրակութեան անդամ է, անցեալ շաբաթ յայտարարած է, թէ ի սկզբանէ «թիւ 907 Յօդուածը Միացեալ Նահանգներու մէջ ընդունուած էր սխալ տեղեկութիւններու վրայ հիմնուելով»: Ան յոյս յայտնած է, որ Միացեալ Նահանգներու կողքին Ազրպեյճանի մասնակցութիւնը՝ Աֆղանիստանի մէջ տեղի ունեցող գործողութիւններուն կ'օգնէ, որ Ազրպեյճան հետագային ստանայ տարեկան 100 միլիոն տոլարի օժանդակութիւն: Հանիեւա կը գտնէ, որ այսօր ազրպեյճանական իշխանութիւններուն առջեւ կանգնած է յատկապէս Միացեալ Նահանգներու մէջ էնոյնային ռազմագոյնի մասին տեղեկատուութեան տարածման եւ «հայամէտ ուժեր»ու դէմ աշխուժ պայքարի միջոցներ գտնելու խնդիրը:

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ԿԸ ՄՏԱՀՈԳԵ ԱԶՐՊԵՅՃԱՆԸ

Ռուսիոյ եւ Հայաստանի միջեւ փոխադարձ անվտանգութեան ապահովման ռազմական դաշինքին վաւերացումը Ռուսիոյ Պետական Տումային կողմէ վերջերս իրարանցում յառաջացուցած է Ազրպեյճանի մէջ:

Ազրպեյճանական «Կադէթ 525» թերթը կը հաղորդէ, որ այս հարցին շուրջ յայտարարութիւն մը կատարած է «Ղարաբաղի Ազատագրութիւն» կազմակերպութեան նախագահ Աբիֆ Նաղը: Ան պատահականութիւն նկատած էր դաշինքին ստորագրութիւնը եւ նշած է, որ Ազրպեյճանի եւ Հայաստանի միջեւ ռազմական գործողութիւններու վերսկսման պարագային կողմերը պիտի սկսին փնտռել դաշնակիցներ, «իսկ ազրպեյճանական իշխանութիւնները այս գծով ունին կրաւորական կեցուածք»:

Նաղը միաժամանակ դիտել տուած է, որ ռազմական գործողութիւններու պէտք է սկսիլ անկախ ստորագրուած որեւէ դաշնագիրէ եւ թէ Ռուսիա իրաւունք ունի օգնելու Հայաստանին միայն այն պարագային, «եթէ ազրպեյճանական ռազմի ներխուժեան Հայաստան»:

ԱԶՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՅԵՐԻՒՐԱԿԱՆՔ

Ազրպեյճանական աղբիւրներ հաղորդեցին, որ Ազրպեյճանի յատուկ ծառայութիւնները կանխած են նախագահ Հայտար Ալիեւի զաւակին՝ Իլհամ Ալիեւի դէմ նախապատրաստուած մահափորձ մը: Ըստ Ազրպեյճանի ազգային անվտանգութեան նախարարութեան, Իլհամ Ալիեւի սպանութիւնը պիտի կատարէր ազրպեյճանցի զինուորական ծառայող Մոհամէտ Օճաղվերտիւնը, որ վերջերս երկու ալ գերիններու հետ ազատ արձակուած է Հայաստանի կողմէ: Ըստ նախարարութեան, Օճաղվերտիւնը նաեւ պիտի իրականացնէր շարք մը այլ երեւելիներու սպանութիւնը:

Հայաստանի ազգային անվտանգութեան նախարարութեան մամուլը եւ հասարակութեան հետ կապերու ծառայութիւնը հիմնովին հերքելով այս լուրին ճշմարտութիւնը՝ յայտնած է, որ Մոհամէտ Օճաղվերտիւն վերջերս ձերբակալուած էր Հայաստանի սահմանային շրջաններէն մէկուն մէջ, երբ Նախիջևանէն կը փորձէր թափանցել Հայաստան: Նախարարութեան կատարած հետախուզական քննութեան իրբեւ արդիւնք պարզուած է, որ Օճաղվերտիւն համաձայնած է աշխատակցիլ Ազրպեյճանի ազգային անվտանգութեան նախարարութեան աշխատակիցներուն հետ, երբ տակաւին բանտարկութեան մէջ էր զինուորական ծառայութենէ փախուստ տուած ըլլալուն համար:

Բանտարկութենէն ետք, համապատասխան փորձառական ժամանակաշրջան մը անցընելէ ետք, ռազարկուած է Հայաստան:

Հայրենի պատասխանատուներու համաձայն, Օճաղվերտիւն յանձնարարուած է Հայաստանի ազգային անվտանգութեան մարմիններուն քով ստեղծել այն համոզումը, թէ Ազրպեյճանի մէջ իրեն նկատմամբ կատարուած բռնարարներուն համար վրէժխնդիր ըլլալու նպատակով «պատրաստ է» վերադառնալ Նախիջևան՝ Հայաստանի յատուկ ծառայութիւններու առաջադրանքով ահաբեկչական եւ խափանարարական գործողութիւններ կատարելու համար:

www.hamazkayin.com

ՀՐԱԺԱՐԻԼ ՊԱՏՐԱՆՔՆԵՐԷ (ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՀԱԿԱՆԱՅ ԲԱՐՈՉՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՇԵՐՏԵՐԸ)

Վերջին ամիսներուն Ազրպեյճանի մէջ Հայաստանի դէմ մղուող քարոզչական պատերազմը ոչ միայն հասած է անախընթաց չափերու, այլեւ ձեռք բերած է աւելի լկտի, բացայայտ ցեղապաշտական գունաւորում: Ոչ թէ պատահական գործարարներ, այլ այս երկրին մէջ մեծապէս յայտնի եւ ոչ հեռու անցեալին բարձր պետական պաշտօններ ստանձնած անձեր են, որոնք նոյնիսկ չեն մաշնար իրենց սեփական էութեան մերկայարանոց ցուցադրումէն՝ յայտարարելով, թէ արցախեան հակամարտութեան լուծումը կը տեսնեն «Ղարաբաղէն հայ բնակչութեան լրիւ արտաքսման մէջ»:

Ազրպեյճանի մէջ այս մարդոց խօսքին ակնաշնորհները քիչ չեն: Ասիկա Արեւմտեան Հայաստանի մէջ Հայկական Յեղափոխութիւնը իրադարձած իրենց «աւագ եղբայր» թուրքիոյ քաղաքական արիւնքտ «փորձառութիւն»ը փոխ առնելու եւ Արցախի հայութեան զինուորական մարդկերական ծրագիր է: Ինչո՞ւ, որովհետեւ ըստ միջազգային իրաւունքի, ցեղասպանութիւն կը նկատուի ոչ միայն որեւէ ցեղային խմբի ֆիզիքական ոչնչացումը, այլեւ՝ տեղահանութիւնը եւ քրտնոքիլ իսկ մեզմէ աւելի լաւ չէր զիտէ, թէ ինչ կը շանախեն «տեղահանութիւն» կամ «արտաքսում» բառերը թուրքերու բառապաշարին մէջ: Ոչնչացում կը նշանակեն:

Ի հարկ է, այս «ծրագիրը» պետութեան դեմակարի շրջաններէն չի հնչեր: Կը հնչէ նոյն ալղեկավարին արտաքին հարցերու նախկին խորհրդական Վաֆա Կիլիզգատէի շրջներէն: Բայց ատիկա չի՞ յուշեր, որ նման բան, ակներեւորէն, քննարկուած է պետական բարձրագոյն մակարդակի վրայ, տա՛նք այդ խորհրդականը Հայտար Ալիեւի ամէնէն մօտիկ շրջանակին մէջն էր: Եթէ այդ այդպէս չէ, ապա ինչո՞ւ Ազրպեյճանի նախագահը հարկ չի նկատեր գէթ ցուցադրանքին սաստել այդ ստահակը: Արդեօք փորձառու Ալիեւը չի՞ հասկնար, որ նման յայտարարութիւնները

Ա) Ազգայնական, ցեղապաշտական կիրքեր կը բորբոքեն Ազրպեյճանի մէջ:

Բ) Ազրպեյճանը կը վարկաբեկան համաշխարհային հանրութեան եւ առաջին հերթին՝ ԵԱՀԿի Մինսքի խմբակին ու անոր եռանախագահութեան առջեւ, որմէ իրենք կ'ակնկալեն Արցախի հարցին խաղաղ լուծման իրենց համար ցանկալի տարբերակ:

Գ) Կը խորացնեն Արցախի ու Հայաստանի արդէն իսկ առկայ այն ձեռք անվտանգութիւնը՝ հակամարտութիւնը իսկապէս խաղաղ ճանապարհով լուծելու Ազրպեյճանի մտադրութեան նկատմամբ եւ կը հարկադրեն անոնց աւելի կարծի դիրք որդեգրել ազերիներու երազած «գրանեալ տարածքներ»ու վերադարձման

փոխարէն՝ Արցախի եւ Հայաստանի համար անվտանգութեան երաշխիքներու պահանջին մէջ:

Դ) Կ'ամրապնդեն Հայաստանի դիրքերը բանակցութիւններու գործընթացին մէջ՝ առիթ տալով մատնացոյց ընելու Ազրպեյճանի իրական մտադրութիւններուն ծայրայեղ վտանգաւորութիւնը՝ ապագայի համար, եթէ այսօր, քանի դեռ Հայաստան ալղեկարելութիւնը ունի, քայլերու չձեռնարկէ այդ վտանգը չէզոքացնելու համար:

Այս բոլորով մէկտեղ, կը կրկնեմ, Ալիեւը ստահակ չի սաստեր, առնուած ցուցակներէն:

1) Ալիեւը ինքն ալ այդպէս կը մտածէ,

2) Իր այդ լուսաւեայն քաղաքներով սեփական ժողովուրդին կը ձգտի ցոյց տալ, թէ նոյնիսկ, իսկ այդ «վճռակալութեան» ցուցադրութիւնը Ալիեւին չափազանց անհրաժեշտ պիտի առնելու եւ Արցախի հայութեան զինուորական մարդկերական ծրագիր է:

3) Կը հասկնայ, որ ԵԱՀԿի Մինսքի խումբի համաձայնագրահաները լուրջի պիտի չառնեն այդ տեսակի վայրահանութիւնը:

4) Նոյն ալղ վայրահանութիւնը Ալիեւին պէտք է ԵԱՀԿի Մինսքի խմբակի նախագահութեան հետ խօսակցելու ընթացքին, որպէսզի վկայակոչէ սեփական ժողովուրդին «համբերութիւնը սպառած ըլլալու» մասին առասպելը՝ Մինսքի խմբակը շանախելու համար, ինչ որ, ի միջի այլոց, ինք արդէն քանի մը անգամ ըրած է:

5) Կ'ուզէ այս ձեռով Արցախի եւ Հայաստանի «աշքը վախցնել»՝ հարկադրելու համար երազային զինուորներու:

Այս կէտերէն իւրաքանչիւրին քաղաքական սնանկութիւնը այնքան ակնյայտ է, որ նոյնիսկ հերքումի կարիք չկայ: Անուամենայնիւ, կարելի չէ չանդադառնալ այն հանգամանքին, թէ ինչ է Ալիեւի եւ անոր երէկւան խորհրդականին յոյսը:

Որքան ալ տարօրինակ թուի, այս հարցումին պատասխանն ալ կայ եւ կը պատկանի Ազրպեյճանի ոչ արդէն նախկին, այլ ներկայի բարձրաստիճան պաշտօնատարներէն մէկուն՝ արտաքին գործոց նախարար Վիլա-

յեթ Կուլիեւին: Այս պարունը, Սեպտեմբեր 11էն ետք աշխարհի մէջ ստեղծուած քաղաքական նոր կացութեան մասին դատողութիւններ ըրած ժամանակ «խորիմաստ» կերպով կը նկատէ, թէ «ռուսեւամերիկեան մերձեցման այժմու համապատկերին մէջ Հայաստան աստիճանաբար պիտի կորսնցնէ իր արժէքը Ռուսիոյ համար՝ իրբեւ թուրքիոյ դէմ հնարաւոր մտքով կ'անցնի փաստել, թէ նոյն տրամաբանութեամբ թուրքիան ալ իր արժէքը աստիճանաբար կը կորսնցնէ Միացեալ Նահանգներու համար՝ իրբեւ ռուսական արդէն չքացած կամ չքացող սպառնալիքի դէմ կարելի պատուարը: Արդեօք ասոր վկայութիւնը չէ՞ր Ռուսիոյ Պետական Տումային արտաքին յարաբերութիւններու յանձնարարական Տիմիթրի Ռակոզինի՝

Թուրքիոյ ուղղուած վերջին յայտարարութիւնը, թէ՛ «Հայաստանի անվտանգութիւնը հաւասար պէտք է ըլլայ Ազրպեյճանի անվտանգութեան»: Այս շատ լուրջ գգուցացում էր թուրքիոյ, նաեւ՝ Ազրպեյճանին, որպէսզի մտոյնը «աքթալութիւն» չերազէ եւ Հայաստանի դէմ յիմար քայլերու չնախաձեռնէ: ՕՍԱՆի անդամ երկրին այսպիսի սպառնալիքի զգուշացում ինքզինք թոյլ չէր տար կատարել նոյնիսկ երբեմնի խորհրդարանի ՄիւրաՆը, առանց վախճալու միջազգային կացութեան լարուածութեան առիթ տալէն, ինչպէս առաջ երբեմն-երբեմն պատահած է: Իսկ այս անգամ այդպիսի լարուածութեան նշոյլ իսկ չկայ:

Ինչ կը նշանակէ այս: Ռուսեւամերիկեան մերձեցումը փաստ մըն է, որ անհեթեթ է շահարկել սեփական յաւակնութիւններու յագուրդ տալու անբարոյ դիտաւորութեամբ: Եւ որքան աւելի շուտ հասկնան ասիկա Պաքուի մէջ, այնքան աւելի շուտ կը հրաժարին պատրանքներէ:

ՈԱՖԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Արեւմտահայերէնի վերածուած)
«Ազգ»

ՓՈՔՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՖԻԼՄ ՄԸ ՄԵԾ ԱՂՄՈՒԿ ԿԸ ՍՏԵՂԾԷ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՁ

Թուրքիոյ «Թէ. Բէ. Թէ.» հեռատեսիլի պետական կայանէն սփռուած ֆիլմ մը մեծ աղմուկ ստեղծած է թուրքիոյ մէջ: Ֆիլմը կը ներկայացնէ քրիստոնեայ եւ հրեայ փոքրամասնութիւններու հանդէպ թուրքիոյ անցեալի քաղաքականութիւնը:

Ֆիլմը, որուն խորագիրն է «Սալքիմ Հանիմիմ Թաքեթի» (օրորող Սալքիմին վզնոցները), կը խօսի այն հայերուն, յոյներուն եւ հրեաներուն մասին, որոնք հարկ չվճարելու պատճառով 1943ին թրքական պետութեան կողմէ զրկուած են թիարաններ:

Այս առթիւ, «Ազատական Շարժում» կուսակցութեան («Գորշ գալլեր») անդամ, խորհրդարանական ԱՀՄՏ Սաքար մեքսստանած է պետական նախարար Եւլմազ Գարաքոյունլուն եւ թրքական ռատիոկայանի եւ հեռատեսիլի հաստատութիւնը (Թէ. Բէ. Թէ.Ն) «դաւաճանութեամբ»: Սաքար ըսած է, թէ այս ֆիլմին մէջ տեղ գտած են տեսարաններ, որոնք կը հակասեն Հայկական Յեղափոխութեան հանդէպ թուրքիոյ որդեգրած կեցուածքին: Իրբեւ օրինակ՝ ան նշած է այն տեսարանը, ուր թուրք ոստիկան մը կը բռնաբարէ հայ կին մը: Ան զարմանք յայտնած է, որ այսպիսի ֆիլմ ինչպէս կրնայ ցուցադրուիլ պետական կայանէ մը:

Իր դէմ ուղղուած ամբաստանութիւններուն պատասխանելով՝ Գարաքոյունլուն ըսած է, թէ Սաքար ոչ ֆիլմին նիւթը ներկայացնող գիրքը կարդացած է եւ ոչ ալ ֆիլմը դիտած է: Ան դիտել տուած է, որ զինուորը թրքական բանակին չէր պատկաներ, այլ՝ Օսմանեան կայսրութեան:

Յայտնեք, որ Սաքար աւելի ուշ այս մասին տուած նաեւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին ան խստօրէն քննադատեց ֆիլմին ցուցադրութիւնը:

«ՄԱՐԿԱՌԹԵԱՆ ՍԵՒ ԳԻՐՔԸ» Կ'ԱՆԴՐԱԴԱՌՆԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

Փարիզի «Պրիվա» հրատարակչութիւնը վերջերս լոյս ընծայած է «Մարդկութեան Սեւ Գիրքը», որ կը ներկայացնէ աշխարհի մէջ տեղի ունեցած ջարդերուն պատմութիւնը: Գիրքին հեղինակներու խումբին ղեկավարը Երուսաղէմի Ողջակիցման Հիմնարկի տնօրէն փրոֆ. Խորայէլ Զառնին է:

Գիրքին մէջ հայերուն վերաբերող բաժինը գրած են պատմաբաններ Վահագն Տատրեան եւ Իվ Թեռնոն, իսկ խմբագրած է Ուաշինկթընի Հայկական Ազգային Հիմնարկի տնօրէն Ռուբէն Ատաթեան:

720 էջոց գիրքին առաջին բաժինն մէջ ներկայացուած է ջարդերու կապուած եզրադրանքները, իսկ երկրորդ բաժինն մէջ այլբանական կարգով զետեղուած են 170 յօդուածներ, որոնցմէ 15ը կը խօսին Հայկական Յեղափոխութեան մասին:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր 2001ին Հ. Յ. Դ. Կլեմտէյի Հայ Դատի Յանձնախումբի, ՌԱԿ Հայ Դատի Խորհուրդի եւ Ս.Դ.Հ.Կ. Հայ Ամբիկեան Խորհուրդի Երկրայացուցիչները յառաջացուցին Կլեմտէյի մէջ Հայկական Յեղափոխութեան Յուշակոթողի խորհուրդ մը՝ քաղաքին մէջ այդ նպատակին յատկացուած յուշակոթողի մը կառուցման համար:

Քաղաքապետական խորհուրդը, որ այս քայլին նախաձեռնեց ոգեկոչելու համար Հայկական Յեղափոխութիւնը եւ մարդկութեան դէմ ոգիւնները, Օգոստոս 2001ին որդեգրեց Քաղաքապետութիւնը Ոգեկոչման Խորհրդատու Երեսուն անդամներու յանձնախումբին յանձնարարութիւնները: Այս յանձնարարութիւններէն մէկը այն էր, որ Քաղաքապետական խորհուրդը յուշակոթող մը իրբեւ նուր ընդունի՝ յարգելու համար յիշատակը Հայկական Յեղափոխութեան մեկուկէս միլիոն նահատակներուն, ինչպէս նաեւ՝ այն բոլոր ամբիկեացիներուն, որոնք օգտակար հանդիսացին հազարաւոր հայեր կորուստէ փրկելու ճիգերուն՝ 1915 - 1923 տարիներուն:

Յուշակոթողի հողաշերտը եւ հաւանական վայրը պիտի տրամադրուի Կլեմտէյ քաղաքին կողմէ եւ պիտի կառուցուի գաղութին կողմէ: Հոկտեմբեր 30ին եւ Նոյեմբեր 15ին Յուշակոթողի խորհուրդը քաղաքի պաշտօնատարներուն հետ հանդիպում մը ունեցաւ քննելու համար զանգուած վայրերու կարելիութիւնները եւ յուշակոթողի կառուցման կապուած հարցեր: Խորհուրդը կը ծրագրէ գաղութի գանգաւ կազմակերպութիւններու եւ անհատներու հետ հանդիպումներ ունեցալ, որպէսզի միասնաբար քննեն ծրագրին մանրամասնութիւնները:

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՆԵԱՆԻ ՀԱՅՏԵՆ

HAMPIG SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536 — USA

ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

Մարդիկ յաճախ կ'ըսեն, թէ կրիփէ կը տառապին, երբ պարզապէս ծանր հարբուի կը դիմագրաւեն: Կրիփին ախտանշանները շատ աւելի ծանրակշիռ են, քան հարբուիին ախտանշանները, եւ անոնք շատ աւելի արագ կը հարուածեն, քան հարբուիին աստիճանաբար կուտակուող ախտանշանները, կ'ըսեն մասնագէտներ:

Ինչ կը վերաբերի հարբուիին, անիկա մեզմէ շատուր համար կեանքի տուեալ մըն է:

Բրիտանիոյ Քարտիֆ համալսարանի հարբուիի կեդրոնին տնօրէնը՝ փրոֆ. Ռոն Էթլըզ կ'ըսէ, թէ իւրաքանչիւր անձ միջին հաշուով մինչեւ 75 տարեկան շուրջ 250 անգամ հարբուիէ կը տառապի:

Հարբուի կը հարուածէ շնչառական դրուածեան վերին բաժինները՝ յանգելով խափանուած քիթի, կոկորդի ցաւի, թէեւ, կը յայտնեն մասնագէտներ, կրիփի պարագային այս նոյն ախտանշանները կրնան յայտնուիլ, առաւել՝ շնչառական դրուածեան վարի բաժիններուն մէջ հարցեր, զօրաւոր հազ եւայլն:

Յարբու հարբուիին դարման չէ գտնուած գլխաւորաբար՝ որովհետեւ շուրջ 200 տարբեր ժահրեր կը պատճառեն անոր ախտանշանները: Էթլըզ կը յայտնէ, որ թէեւ դեղեր մշակուելու ըն-

թացքին մէջ կը գտնուին, սակայն անոնք կրնան միայն մէկ տեսակ ժահրէմ պայքարիլ:

Մասնագէտը կ'ըսէ, թէ հարբուի մարդոց ենթադրածին չափ փոխանցիկ չէ:

«Պէտք է անձի մը հետ ֆիզիքական շատ սերտ հպում ունենալ հարբուիէ վարակուելու համար», կը յայտնէ ան՝ աւելցնելով, որ շատ աւելի հաւանական է ընտանիքի մէկ անդամէն փոխանցուիլը, քան՝ հանրային վայրի մը մէջ մարմնի մը հարբուիէ:

Անձ մը հարբուիէ կրնայ վարակուիլ ներշնչելով՝ հազի կամ

փռնգտուքի ճամբով՝ օդին մէջ ժահրը պարուսնակող կաթիլներ կամ քիթը կամ աչքերը շփելով ժահրով վարակուած մատներով կամ գործառականներ, ինչպէս՝ անձեռոցներ:

Ժահրը քիթին, կոկորդին եւ ցնցուղներու ներքին մաշկերու բորբոքում կը պատճառէ: Հարբուի մօտաւորապէս 4էն 7 օր կը տեւէ:

Կրիփը նոյնպէս ժահրային հիւանդութիւն մըն է: Կան կրիփի ժահրի երեք տեսակներ. Ա., Պէ. եւ Սէ. տեսակները:

● Ա. տեսակը ամէնէն հասարակը եւ ամէնէն

ծանրակշիռ ախտանշանները կը պատճառէ. աւելի քան 37 աստիճան սելսիուս ջերմութիւն, դողեր, կոկորդի ցաւ, չոր հազ, մկանային ցաւեր, յոգնածութիւն, ախորժակի կորուստ:

● Պ. տեսակը նմանօրինակ ախտանշաններ ունի, սակայն նուազ ծանրակշիռ է:

● Ս. տեսակը ամէնէն թեթեւն է եւ հարբուիանման ախտանշաններ ունի:

Կրիփը կը տարածուի նոյնպէս հազէ եւ փռնգտուքէ եկած կաթիլներու ճամբով: Ժահրը մարմինն մէջ կը մտնէ քիթին կամ բերանին

ճամբով եւ կ'ազդէ շնչառական դրուածեան վրայ:

Կրիփի համաճարակները կ'արձանագրուին ամէն ձմեռ, ընդհանրապէս նոյեմբէրէն Ապրիլ երկարող ժամանակամիջոցին՝ 8էն 10 շաբթուան ժամանակամիջոցներով:

Երեւանի եւ թարմ պտուղի օգտագործումը:

Անոնք կ'ըսեն, թէ պէտք է օրական մարգանքներու հետեւիլ, նկատի ունենալով, որ նոյնիսկ կարճ ժամանակով քաւելը կը զօրացնէ բնական պաշտպանութիւնը՝ թափ տալով արեան շրջապատութեան եւ բորբոքումներու դէմ պայքարող արեան ճերմակ գնդիկները մարմինն տարբեր բաժինները փոխադրելով:

Հետազօտութիւնները ցոյց տուած են, թէ անձ-կութիւնը կրնայ նուազեցնել բորբոքումներու դէմ պայքարելու մարմինն կարողութիւնը, հետեւաբար պէտք է խուսափիլ «սթրէս»է, կ'ըսեն մասնագէտներ:

Անոնք կը յայտնեն նաեւ, թէ պէտք է մեծ քանակութեամբ սխտոր ուտել, նկատի ունենալով, որ անիկա հակամարնէ եւ հակաթանր յատկութիւններ ունի:

Բնականաբար նաեւ պէտք է ձեռքբերել լուսի, երբ անձը չիման մէջ կը մտնէ հարբուիէ տառապող մէկու մը հետ:

Ինչ կը վերաբերի կրիփին, Բրիտանիոյ Պըր-մինկէէմի հետազօտութեան կեդրոններէն մէկուն տնօրէնը՝ տոքթ. Տակլու Ֆլեմինկ կ'ըսէ, թէ անոր կանխարգիլման կամ նուազ ծանրակշիռ դարձնելու լաւագոյն ձեւը պատուաստումն է, մասնաւոր՝ 65 տարեկանէն վեր անձերու, կուրծքի հիւանդութիւններէ (օրինակ՝ շնչառակութիւն), սրտի

Խոյի եւ մարդկային կրիփի ժահրերու ծինային միութիւնը պատճառած է մարդկութեան պատմութեան մէջ ամէնէն մահացու համաճարակներէն մէկը՝ 1918ի «սպանական» կրիփի համաճարակը, կ'ըսեն հետապօտողներ՝ պոնշացնելով, որ կրիփի այլ համաճարակ մը անխուսափելի է:

«Սայլըս» թերթին Սեպտեմբերի մէկ թիւին մէջ լոյս տեսած տեղեկագիրի մը մէջ Քանպերայի Աւստրալիական Ազգային Համալսարանի գիտնականներ կ'ըսեն, թէ 1918ի համաճարակին պատասխանատու ժահրին մէջ բանալի ծին մը «հիպրիտ» մըն է՝ ստեղծուած մարդու եւ խոյի կրիփի ժահրերու ծիներու միացումով:

Այս վերադասաւորումը՝ կրնայ բացատրել համաճարակին այնքան ծանրակշիռ բնոյթը, կը յայտնեն անոնք:

Համաճարակը, որ սկսած էր Ա. Աշխարհամարտի ատարման անմիջապէս ետք, աւելի քան 20 միլիոն զոհ խլած է աշխարհի տարածքին, 1918ին եւ 1919ին:

Անցեալի կրիփի համաճարակները հասկընալը կենսական է ապագայ սպառնալիքներ նախատեսելու համար, կ'ըսէ ուսում-

1918ի ԿՐԻՓԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ՊԱՏՃԱՌԱԾ ԵՆ ... ԽՈԶԻ ԵՒ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԺԱՀՐԵՐ

նասիրութեան ձեռնարկած գլխաւոր հետապօտող Մարք Կիպլ, որ այլ համաճարակ մը անխուսափելի կը նկատէ:

«Անոնց պատճառը ժահրին մէջ փոփոխութիւններ է եւ ժահրը դարձեալ պիտի փոխուի», կը շեշտէ ան՝ աւելցնելով, որ համաշխարհային առումով համաճարակներ արձանագրուած են 1890ական թուականներուն, 1918ին, 1957ին եւ 1968ին:

1918ի կրիփը վարակուած մօտաւորապէս 40 անձերէն մէկը սպաննած է, մինչ կրիփի ներկայ տեսակներ մօտաւորապէս 25 հազարէն մէկը կը սպաննեն:

«Սայլըս» թերթին մէջ լոյս տեսած այլ տեղեկագիր մը կ'արժարծէ 1997ին Հոնկ Բոնկի մէջ արձանագրուած «հաւու» մահացու կրիփին հարցը: Անիկա սպաննած էր վարակուած 18 անձերէն վեցը:

Կրիփը կը վարակէ մարդիկ, խոյերը, կարգ մը թռչուններ, ձիեր եւ փոկեր: Հոնկ Բոնկի պարագան առաջինն էր, երբ կրիփի

ժահրը ուղղակի հաւերէն մարդոց կը փոխանցուէր: Հանրային առողջութեան իշխանութիւնները օրին հրահանգած էին աւելի քան մէկ միլիոն հաւազգիի փճացումը՝ հիւանդութեան յաւելեալ տարածումը կանխարգիլելու համար:

Ուիսքոնսին համալսարանին գիտնականներէն Եոյիհիթո Բաուաթա, որ ուսումնասիրած է վերոնշեալ հարցը, գտած է, թէ ժահրին 10 ծիններէն մէկուն մէջ փոքրիկ փոփոխութիւն մը կարգ մը տեսակներ յատկապէս մահացու կը դարձնէ:

Կիպլ դիտել կու տայ, որ անհրաժեշտ է գիտնալ, թէ ինչո՞ւ կարգ մը կրիփներ աւելի ծանր հիւանդութիւն կը պատճառեն, քան ուրիշներ, որովհետեւ «սպիկա կրնայ օգտակար ըլլալ բժշկական դարմանումներուն համար, հակաժահրային դեղերու ձաւքով ժահրը հակակշիռի տակ առնելու կամ մեղի օգնելու, որ սպառնացող նոր համաճարակներ ճանչնանք»:

Մասնագէտներ կ'ըսեն, թէ «հանդարտ Պիթը» ծորձ հիւսիսեան քաղցկեղին մահը կրնայ օժանդակել ծխողներու, որ հրաժարին ծխախոտէն:

Անոնք կ'ակնկալեն, որ Հէրիսընի մահը հիւանդութեան հանդէպ մարդոց գիտակցութիւնը արթնցնէ եւ լաւ պատգամ մը փոխանցէ՝ ծխելու վտանգներուն մասին:

«Տը Պիթը» խմբակին կրտսերագոյն անդամը, որ անցեալ շաբաթավերջին 58 տարեկան

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ԾԽԱԽՈՏԻ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԴՆԵԼՈՒ ԿՈԶ Կ'ՈՒՂՂԷ

ՆԻՔՈԹԻՆԸ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԴԱՐՄԱՆՈՒՄ՝ 12 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

Բրիտանական «Քէնսըր Ռիսը» Բէմփէյն» բարեսիրական ընկերութիւնը որոշած է 12 տարեկանէն սկսեալ պատանիներու մօտ նիքոթինի փոխարինման դարմանումի (Էն. Ար. Թի.) ձեռնարկել՝ օժանդակելու համար անոնց, որ հրաժարին ծխելէ:

Երկրին մէջ օրական աւելի քան 400 հոգի ծխելու կը սկսի: Մինչեւ անոնք 15 տարեկան ըլլալ, չորսէն մէկը իսկական ծխող էլ այդ տվորութեան կախեալ կը դառնայ:

Էն. Ար. Թի. 16 տարեկանէն վար պատանիներու համար չի թելադրուի, հետեւաբար անիկա սկսեալ տարեկան շրջանին կարգ մը պատանիներու մօտ պիտի փորձարկուի:

Միւս կողմէ, Օքսֆորտ համալսարանին Առողջապահութեան Գիտութիւններու հիմնարկին հետապօտողներուն համաձայն, ծխող կիներ, որոնք կ'ուզեն յղանալ, աւելի երկար ժամանակի (գրեթէ երկու ամիս) կարիք կ'ունենան յղանալու համար, քան՝ բնաւ ծխողներ կամ անոնք, որոնք աւելի քան տարի մը առաջ հրաժարած են ծխելէ:

Հետապօտութիւններ ցոյց տուած են նաեւ, որ յղութեան շրջանին ծխելը կապուած է մանկական աւելի մեծ թիւով մահերու, շնչառական դրուածեան աւելի մեծ համեմատութեամբ բորբոքումներու եւ բնականէն նուազ կշռող նորածններու:

նին մահացած էր, չէր պահած ո՛չ իր հիւանդութիւնը, ոչ ալ այն տուեալը, թէ ինք ծանր ծխող մը եղած է:

Բրիտանիոյ Գաղցկեղի Հետազօտութիւններու Արշալի Բարեսիրական Կազմակերպութեան անդամներէն տոքթ. Լեզլի Ուոլքըր կ'ըսէ, թէ ծորձ հիւսիսեան սիրուած աստղերու եւ հանրածանօթ շարք մը անձնաւորութիւններու նորագոյնն է, որ քաղցկեղէ կը մահանայ:

«Ասիկա ցոյց կու տայ, որ քաղցկեղը հարբուտութիւն եւ հոշակ չի ճանչնար», կը յայտնէ ան:

Ուոլքըրի համաձայն, Հէրիսընի քաղցկեղի դէմ պայքարը սկսած է թոքերու եւ կոկորդի ուռերէ, եւ վերջերս ան դարմանումներու ենթարկուած է իր ուղեղին վրայ յայտնուած ուռի մը համար:

«Ան գաղտնի չէր պահեր այն պարագան, թէ մոլի ծխող մը եղած է, եւ մենք մեր հետազօտութիւններէն գիտենք, թէ ծխախոտը թոքերու քաղցկեղի մեծագոյն պատճառն է», կը յայտնէ ան:

Առողջապահութեան մասնագէտներու եւ ծխախոտի դէմ պայքարող խմբակներու կարծիքով, Հէրիսընի հրապարակաւ զղջումները՝ ծխելու մոլութենէն եւ անոր կանխահաւ մահը կրնան շատ աւելի օգտակար ըլլալ համոզելու համար մարդիկ, որ դադրին ծխելէ կամ չսկսին ծխելու, քան՝ որեւէ հանրային արշաւ:

Մինչ այդ Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը կառավարութիւններուն կողմէ ուղղած է ծխախոտի ծանուցումները խոսակցութեան տակ առնելու եւ անոնց ծխախոտի մեծ ընկերութիւններուն կողմէ ինքնակամ ինքնազստումի խոստումները:

Մարգական միջազգային կազմակերպութիւններ եւ մարդիկներ իրենց ձայնը միացուցած են ՄԱԿի կազմակերպութեան՝ պահանջելով, որ մարգական խաղերու ընթացքին ծխախոտի ծանուցումները արգելուին:

«Ծխախոտէ գերծ Մարգան-Մաքուր խաղ» արշաւէ ընթացքի մէջ գրուած է. Ա. Հ. կազմակերպութեան 191 անդամներուն միջեւ բանակցութիւններու երրորդ ռաունտի մը

բացման առիթով (նոյեմբեր 22), ծխախոտի հակակիռի տակ առնող ընդհանրական համաձայնագիրի մը շուրջ, որ պէտք է գոյանայ մինչեւ 2003:

Երկիրներ, որոնցմէ շատերը ծխախոտի մեծ ընկերութիւններու կողմէ ճնշումներու տակ կը գտնուին, տարակարծիք են այն հարցին շուրջ, թէ համաձայնագիրը ի՞նչպէս պէտք է փորձէ ծխախոտի մաքսաներգութիւնը եւ առեւտուրը կասեցնել:

ՄԱԿի յիշեալ կազմակերպութիւնը ժընեւի իր վերջին խորհրդաժողովէն առաջ յայտնած էր, թէ ընկերութիւնները հանրային յարաբերութիւններու ընդհանրական մեծ ճիգերի գործ կը դնեն կառավարութիւնները համոզելու համար, որ ծխախոտի ծանուցումներուն դէմ մեծ համաձայնութիւններ չգոյացնեն:

Հաղորդագրութեան մը մէջ ՄԱԿ կը յայտնէ, որ գլանիկ արտադրող աշխարհի մեծագոյն 3 ընկերութիւններ՝ «Պիթի» Ամերիքը Թոպաք», «Ֆիլիպ Մորիս» եւ «Ճըփէն Թոպաք», վերջերս որոշած են միջոցառումներ որդեգրել՝ արգելելու համար, որ ծանուցումներ չծխողներու եւ յատկապէս երիտասարդներու ուղղուին:

ՄԱԿի կազմակերպութեան համաձայն, այդ ընկերութիւնները կողմ կ'ուղղեն կառավարութիւններու, ՄԱԿի գործակալութիւններու եւ Համաշխարհային Դրամատան, որ վստահին «նոր նախաձեռնութեան, որ ո՛չ նոր է, ոչ ալ օգտակար»:

Ա. Հ. Կազմակերպութեան համաձայն, ծխախոտի կապուած հիւանդութիւններէ մահերը 2000ին 4,2 միլիոնի բարձրացած են՝ 1999ի 4 միլիոնէն եւ պիտի շարունակեն բարձրանալ, եթէ միջոցառումներու չզիմուին:

Անոր գնահատումով, դարձու առաջին երկու տասնամեակներուն 150 միլիոն մարդ կրնայ մեռնիլ ծխախոտի պատճառով:

կանք մը կու տան միայն, առանց որեւէ բան փոխելու ծխելու պատճառով մահերու համեմատութիւններէն, ըսաւ քաղցկեղի ամերիկեան ազգային հիմնարկին մէկ տեղեկագիրը անցեալ շաբաթ:

Մ. Նահանգներու մէջ վաճառուող ծխախոտներուն 87 առ հարիւրը «թեթեւ» եւ ցած համեմատութեամբ կուպր պարունակող («լօթաք») տեսակներ են:

Ուսումնասիրութիւնը գտած է, որ նման ծխախոտներու լայնածիր որդեգրումը՝ երկար տեւողութեամբ ծխողներու մօտ թոքերու քաղցկեղի համեմատութեան աճը չէ կանխարգիլած:

Տեղեկագիրը, որ պատրաստուած է Սան Տիեգոյի Փալիֆորնիա համալսարանին մասնագէտներէն տոքթ. Տէյվիդ Պըրնզի եւ Սան Ֆրանսիսքոյի Փալիֆորնիա համալսարանին մասնագէտներէն տոքթ. Նիլ Պենովիցի կողմէ, ցոյց կու տայ, թէ ծխախոտի ընկերութիւններ մշակած են գլանիկներ, յատկապէս՝ որպէսզի քանակագրային Առեւտուրի խորհուրդին «քանակութիւնները» ծխող մեքենաներու օգտագործումով, գտնեն, թէ անոնք նուազ կուպր կ'արտադրեն, երբ ծխուին, սակայն նաեւ՝ որպէսզի անոնք իսկական ծխողներուն ճիշդութիւնի եւ կուպրի ամբողջական «տոք»ը հայթայթեն:

Տեղեկագիրը կ'ըսէ, թէ նման ծխախոտներու ծանուցումներ խաբէութիւն են: «Բազմաթիւ ծխողներ թեթեւ գլանիկներ ծխելու կը սկսին՝ մտահոգուած իրենց առողջութեամբ, հաւատարմով, որ անոնք նուազ վտանգաւոր են կամ ծխախոտէն հրաժարելու քայլ մըն են: Նման ծխախոտներու ծանուցումներն ու վաճառքը կրնան մղել մարդիկ, որ ծխելու սկսին եւ կրնան արգելափել ծխելէ դադրելը, որոնք շատ աւելի կարեւոր տուեալներ են՝ ծխելու կապուած հիւանդութիւններուն մէջ, կը յայտնէ անիկա:


Պատրաստեց՝ Ս. Ա. ՊՈՅԱՃԵԱՆ (Աղբիւրներ՝ «ԹՈՓ ՀԵԼԹ» եւ «ՈՂՅՈՐԴ»)

A black and white photograph of a vintage computer monitor. The monitor has a light-colored, possibly white, bezel and a dark, rectangular screen. It is positioned on a surface, and a portion of a keyboard is visible at the bottom edge of the frame. The lighting is somewhat soft, and the overall image has a slightly grainy texture.

* Վերոյիշեալ յայտագիրները ենթակայ կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առնետրական ծա-
նոցումներ հրատարակել փափաքողներէն կը
խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերնլի գիրով
(հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար
պաշտօնական թուրքի վրայ, եւ՝ հաստատում) ներ-
կայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենակը:



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ. ԻՐ ԱՌԱՋԻՆ ՄՐՑՈՒՄԸ ԿԸ ԿԱՏԱՐԵ ԹՐԻՓՈԼԻԻ ՄԵՋ

Լիբանանի ֆուտբոլի ֆեդերասիոնը հրապարակեց Ա. դասակարգի ախոյեանութեան 2001 - 2002 եղանակին երթի մրցումներուն յայտագիրը, որ կը սկսի յառաջիկայ 16 Դեկտեմբերին:

Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական կազմը եղանակի իր առաջին մրցումը կը կատարէ Սալամի դէմ, Կիրակի, 16 Դեկտեմբերին, Թրիփոլիի Քաղաքապետարանի դաշտին վրայ, ժամը 2:15ին:

Ստորեւ՝ Ա. հանգրուանի մրցումներուն յայտագիրը (վաղուան մարզական մեր էջով կու տանք երթի մրցումներուն ամբողջական յայտագիրը):

●ԿԻՐԱԿԻ, 16 ԴԵԿՏԵՄԲԵՐ			
	ԺԱՄ	ԴԱՇՏ	
Պըրժ - Ահտ	2:15ից	Մարգական Աւան	
Սալամ - Հ. Մ. Ը.Մ.	2:15ից	Թրիփոլի	
Հ.Մ.Մ. - Անսար	2:15ից	Պուրժ Համուտ	
Ախա Ահլի Ալէյ - Թատամոն Սուր	6:00ից	Պէյրուք	
●ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ			
ՌասիԳկ - Ծ. Սահէլ	2:15ից	ԺուԳիէ	
Ահլի Սալտա - Սաֆա	2:15ից	Սալտա	
Նըժմէ - Սաժէս	6:00ից	Մարգական Աւան	

ՊՈՒՆՏԸՍԼԻԿԱ

ԼԵԻԵՐՔՈՒՋԸՆ ԿՐԵՑ ԵՂԱՆԱԿԻ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պունտրալիկա) 15րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Պայէր Լէւերքուզը կրեց եղանակի իր առաջին պարտութիւնը, 2-1 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Վերտըր Պրեմընի դաշտէն (5րդ): Հակառակ իր այս կրած պարտութեան, անիկա մնացապարագլուխի դիրքին վրայ, եւ երկու կէտի առաւելութիւն մը ունեցաւ Պորուսիա Տորթմունտի վրայ, որ 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Բէօլնը, բարձրացաւ 2րդ դիրքը, երկու կէտով գերապանցելով Պայէրն Միւնիխը, որ 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Հերթա Պերլինէն, նահանջեց 3րդ դիրքը:

Բէօլնի դէմ տեղի ունեցած մրցումին, Տորթմունտի կողմէր նշանակեցին Մարսիո Ամորոսո (17րդ՝ փենալթիով), եւ Էվերթոն (42րդ):

Ստորեւ՝ 15րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Հերթա Պերլին - Պայէրն Միւնիխ	2-1
Համպուրկ - Զանքթ Փաուլի	4-3
1860 Միւնիխ - Զոքպուս	1-0
Շթուրկարթ - Պ. Մէօնընկլատպախ	1-1
Նիւրնպէրկ - Շալքէ	0-3
Վերտըր Պրեմըն - Պայէր Լէւերքուզը	2-1
Բէօլն - Պորուսիա Տորթմունտ	0-2
Զայդըրսլաուրըրն - Ֆրայպուրկ	3-0
Հանգա Ռոսթըր - Վոլֆսպուրկ	1-2
ԴԱՍԱՌՈՐՈՒՄ	
	Կէտ
1. Պայէր Լէւերքուզը	36
2. Պորուսիա Տորթմունտ	34
3. Պայէրն Միւնիխ	32
4. Զայդըրսլաուրըրն	31
5. Վերտըր Պրեմըն	29
.....	
16. Բէօլն	11
17. Նիւրնպէրկ	11
18. Զանքթ Փաուլի	7

ԼԻԲԱՆԱՆԻ ՈՒ ՇՈՒԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԵՒ Հ. Ս. Գ. Մ.Ի ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ

Հայաստանի մէջ կայացած աշխարհի 6րդ Ու Շուի ախոյեանութեան խաղերուն, Լիբանանի հաւաքականը շահեցաւ 3 պրոնկ մետալ եւ 4 պատուոյ զիւր:

Այս առիթով, մասնակից մարզիկները, գլխաւորութեամբ Հ. Ս. Գ. Մ.ի նախագահ՝ Կարօ Քէպապճեանի եւ Լիբանանի Ու Շուի ֆետերասիոնի նախագահ՝ Անթուան Չայէքի, Երեքշաբթի, 27 Նոյեմբերի առաւօտեան այցելութիւն մը տուին նախագահ Կոր. Էմիլ Լահուտի: Նախագահը մօտէն ծանօթացաւ Ու Շուի մարապրետսի Լիբանանի գործունէութեան: Շնորհաւորանքի եւ հպարտանքի արտայայտութիւններէն ետք, ան քաջալերական խօսքեր ուղղեց մարզիկներուն եւ խոստացաւ թիկունք կանգնիլ ֆետերասիոնի ձեռնարկներուն:

Այս առիթով, Մեծ Վարդապետ Կարօ Քէպապճեան նախագահին նուիրեց աշխարհի 6րդ ախոյեանութեան մրցումներուն առիթով հրապարակուած ոսկիէ մետալը, իսկ Անթուան Չայէք նուիրեց Լիբանանի Ու Շուի ֆետերասիոնի զինանշանը:

ԹԵՆԻՍ

ՖՐԱՆՍԱ ՇԱՐԵՑԱԻ «ՏԵՅՎԻՍ» ԲԱԺԱԿԸ

Անցեալ շաբաթավերջին, Ֆրանսա 3-2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Աւստրալիան, թենիսի «Տէյվիս» բաժակի մրցաշարքի աւարտականին, իր պատմութեան մէջ 9րդ անգամ ըլլալով բարձրացուց բաժակը:

Ֆրանսայի երրորդ եւ ճակատագրական սէթը շահեցաւ Նիքոլա Էսքրիտ, պարտութեան մատնելէ ետք Ուէյն Արթուրը՝ 6-7, 7-6, 3-6 եւ 3-6 արդիւնքով:

Հակառակ անոր որ Ֆրանսա 9րդ անգամ ըլլալով բարձրացուց բաժակը, սակայն անիկա բաւական հեռու է Միացեալ Նահանգներէն, որ 31 անգամ շահած է բաժակը:



Ֆրանսացի մարզիկները՝ իրենց շահած բաժակով:

Ստորեւ՝ «Տէյվիս» բաժակը շահած երկիրները:	
Միացեալ Նահանգներ -	31 անգամ
Աւստրալիա -	27 անգամ
Բրիտանիա -	9 անգամ
Ֆրանսա -	9 անգամ
Շուէտ -	7 անգամ
Գերմանիա -	3 անգամ
Չեխիա -	1 անգամ
Իտալիա -	1 անգամ
Հարաւային Ափրիկէ -	1 անգամ
Սպանիա -	1 անգամ

ԶԱԼՉԻՕ

ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ՝ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիօ) 12րդ հանգրուանի մրցումներուն, Քիելօ Վերոնա 3 - 2 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք Ա. Սէ. Միլանի «Սան Սիրօ» դաշտէն, նահանջեց 2րդ դիրքը, պարագլուխի դիրքը զիջելով Ինթէր Միլանի, որ 4 - 2 արդիւնքով, յաղթական վերադառնալէ ետք Աթալանթայի դաշտէն, երկու կէտի առաւելութիւն մը ունեցաւ Քիելօ Վերոնայի եւ Ա. Էս. Ռոմայի վրայ, որոնք ունին 23ական կէտ: Այս վերջինը իր ունեցած տկար կոլէվըրէճին շնորհիւ կը գրաւէ 3րդ դիրքը:

Աթալանթայի դէմ տեղի ունեցած մրցումին, Ինթէրի կողմէր նշանակեցին Լուիճի Տի Պիաճիօ (8րդ), Բրիսթիան Վիերի (60րդ՝ փենալթիով եւ 75րդ) եւ Մոհամէտ Քալուն (79րդ): 60 հապար համակիրներու ներկայութեան Ա. Սէ. Միլան 3 - 2 արդիւնքով պարտութեան մատնելէ իր հիւրը՝ Քիելօ Վերոնան, հակառակ անոր որ անիկա Ա. Կիսախաղին 2 - 1 արդիւնքով պարտուած էր:

Ֆիլիփօ Ինցալի (15րդ) եւ Անտրէյ Շեվչենքօ (58րդ՝ փենալթիով եւ 64րդ) նշանակեցին յաղթական կազմին կոլերը: Ա. Էս. Ռոմա դժուարութեամբ 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ վերջին դիրքը գրաւող Վենեցիան, երբ մրցումին վերջին վայրկեանին Տիեֆօ Ֆուլչէր նշանակեց իր կազմին փրկարար կոլը:

Ա. Էս. Ռոմա մրցումը

Աթալանթա - Ինթէր Միլան	2 - 4
Պուլոնիա - Թորինօ	1 - 0
Ֆիորենցիա - Փիաչենցա	1 - 3
Լեչէ - Լազիօ Ռոմա	1 - 2
Ա. Սէ. Միլան - Զիելօ Վերոնա	3 - 2
Ա. Էս. Ռոմա - Վենեցիա	1 - 0
Ուտինգէ - Փարմա	3 - 0
Վերոնա - Պրեշիա	2 - 0
Եուվենթուս - Փերուճիա	2 - 0

ԴԱՍԱՌՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Ինթէր Միլան	25
2.- Զիելօ Վերոնա	23
3.- Ա. Էս. Ռոմա	23
4.- Ա. Սէ. Միլան	22
5.- Եուվենթուս	20
.....	
16.- Փերուճիա	10
17.- Ֆիորենցիա	10
18.- Վենեցիա	4

ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԼԻՎԸՐՓՈՒԼ ԱՄՐԱՊՆԴԵՑ ԻՐ ԴԻՐՔԸ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 15րդ հանգրուանի մրցումներուն, Լիվըրքուլ 1-0 արդիւնքով յաղթական վերադառնալէ ետք՝ նախավերջին դիրքը գրաւող Տերայի Քաունթիի դաշտէն, ամրապնդեց պարագլուխի իր դիրքը, եւ այժմ երեք կէտի առաւելութիւն մը ունեցաւ Արսենալի վրայ, որ 2-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք վերջին դիրքը գրաւող Իփսուիչը, բարձրացաւ 2րդ դիրքը, մէկ կէտով գերապանցելով Լիժըր: Այս վերջինը 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Ֆուլիէմի հետ, նահանջեց 3րդ դիրքը, չորս կէտով մնալով Լիվըրքուլէն:

Տերայիի դէմ տեղի ունեցած մրցումին Մայքըլ Օուրն նշանակեց մրցումին «որը» կոլը (6րդ): Իսկ Իփսուիչի դէմ տեղի ունեցած մրցումին, Արսենալի կոլերը նշանակեցին Ֆրետըրիք Լիունկպերկ (5րդ) եւ Թիերի Հանրի (56րդ՝ փենալթիով):

15րդ հանգրուանի մրցումներուն մեծագոյն պարտելը եղաւ Մանչեսթըր Եունայթեդը, որ իր դաշտին վրայ 3-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Չելսիէն, աւելի քան 67 հապար համակիրներու ներկայութեան: Ալեքս Ֆերկըսընի կազմը, որ կը կրէր եղանակի իր 5րդ պարտութիւնը, նահանջեց 7րդ դիրքը: Մարիօ Մելիթոք (6րդ), Ճիմի Ֆալոյտ Հասելպէնք (64րդ) եւ Էլյուիւր Կուտիոնսըն (86րդ) նշանակեցին լոնտոնեան կազմին կոլերը:

ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍԵԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

- ՇԱՆՎԻԼ ՀԱՆԴԻՍԱՅԱԻ ԱՇՆԱՆ ԱՌՈՅԵԱՆ - ՌԻԱՏԻ ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԻ ԾԱՆՐ ՊԱՏԻՇՆԵՐՈՒ

Լիբանանի պաքեթպոլի տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան 9րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումներուն, Շանվիլ 99-94 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Սաժէսը հանդիսացաւ աշնան ախոյեան:

Ստորեւ՝ երթի վերջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Սանթրալ -	Սատաքա	73-76
Անիպալ -	Պու Սթարկ	74-69
Անդրանիկ -	Քահրապա	88-85
Շանվիլ -	Սաժէս	99-94
Ռիատի -	Թատամոն	88-71
Ստորեւ՝ դասաւորումը:		
Յաղթ. Պարտ. Կէտ		
1. Շանվիլ	7	23
2. Սաժէս	7	23
3. Ռիատի	6	21
4. Սատաքա	5	19
5. Պու Սթարկ	5	19
6. Անդրանիկ	5	19
7. Անիպալ	5	19
8. Սանթրալ	3	15
9. Թատամոն	1	11
10. Քահրապա	1	11

ԼԻԲԱՆԱՆԻ պաքեթպոլի ֆետերասիոնը, իր գումարած վերջին ժողովին, ծանր պատիժներու ենթարկեց Ռիատի ակումբը, որուն համակիրները Սաժէսի դէմ տեղի ունեցած մրցումին կոտրած էին Ղապիրի դաշտին աթոռները եւ կրօնական բնոյթի արտայայտութիւններ ունեցած:

Ֆետերասիոնը 15 միլիոն լիբանանեան ոսկի տուգանքի ենթարկեց եւ երեք մրցումով կախալայեց Ռիատին: Անիկա իր երեք մրցումներն ալ պիտի կատարէ դռնփակ. արդէն իսկ անիկա մէկ մրցում կատարած է դռնփակ:

Լիբանանեան բանակի մէկ յայտարարութիւնը կ'ընէ, թէ Ռիատիի համակիրներէն եօթը դատի կանչուած են համայնքային հարցեր հրահրած ըլլալու յանցանքով ամբաստանուելէ եւ բանտարկուելէ ետք:

ԱՅՍՈՐ ԿԸ ՍԿՍԻՆ ԴԱՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Դարձի Ա. հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենան երեք հանդիպումներ, իսկ վաղը՝ երկու հանդիպումներ, հետեւեալ յայտագիրն հիմամբ:

	Դաշտ	Ժամ
●ԱՅՍՈՐ		
Թատամոն - Սաժէս	Զֆար Հըպպա	20:00ից
Ռիատի - Զահրապա	Ռիատի	21:30ից
Անդրանիկ - Պու Սթարկ	Անդրանիկ	21:45ից

●ՎԱՂԸ		
Սանթրալ - Շանվիլ	Սանթրալ	19:00ից
Անիպալ - Սատաքա	Զահլէ	21:00ից

ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. էջէն

մի պիտի ենթարկուի:

Նշենք, որ նիստին ընթացքին ուժանիւթի նախարար Պայտուն եւ էլեկտրականութեան ընկերութեան ընդհանուր տնօրէն Մուաւաթ ամբաստանութիւններ փոխանակեցին ընկերութեան ֆիուլ օյլ ապահովելու ուղացումին գծով:

Պայտուն ըսաւ, որ Մուաւաթ ֆիուլ օյլի կարիքը իրեն կը փոխանցէ այն օրը, երբ հոսանքը կ'ընդհատուի, եւ անիկա դիտումնաւորէ:

Մուաւաթ պատասխանեց, որ ամիսէ մը ի վեր մէկէ աւելի նամակներ լրացած է նախարարութեան ֆիուլ օյլ գնելու գումարներ պահանջելով, եւ ամէն անգամ կը ստանայ միեւնոյն պատասխան, թէ՛ նախ ընկերութիւնը պէտք է վճարէ իր յետեւեալ պարտքերը:

Երեսփոխաններ խօսք առնելով՝ պահանջեցին կապմէլ խորհրդարանական քննիչ յանձնախումբ, որի շնորհիւ մերժեցին խորհրդարանի պատասխանատուութեան գծով ակնարկութիւնները, եւ պահանջեցին, որ պետական գործունէութեան վերահսկիչ մարմինները տէր կանգնին իրենց պատասխանատուութիւններուն եւ պարտականութիւններուն, իսկ երբ անոնք թերանան խորհրդարանը կը ստանան հարցը: Կառավարութիւնը պատասխանատու է էլեկտրական հոսանքի ընդհատումին, մասնաւորապէս 1992էն առդին երեք միլիոն տոլար ծախսած է այս բնագաւառին համար՝ խոստանալով վերջ դնել հոսանքի ընդհատումին, հետեւեալ հաշիւ պէտք է պահանջել կառավարութիւնէն եւ ո՛չ անհատներէ, պնդեցին կարգ մը երեսփոխաններ:

Խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրվի իր խօսքին մէջ նկատուի տուաւ, որ երկրին գլխաւոր վերահսկիչը խորհրդարանն է, եւ հոն պէտք է հաշիւ պահանջել, որպէսզի իւրաքանչիւր նախարար եւ տնօրէն վճար, թէ հաշուետու է եւ կրնայ տապալիլ, եթէ թերահայ:

ԴԱՏԱԿԱՆ ԸՏԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Դրամական հարցերու ընդհանուր դատախաչ խալի Ռահալ երէկ էլեկտրականութեան ընկերութեան գանձումներուն մէջ թերացումին մասին հարցաքննեց ընկերութեան տարբեր վարչութիւններու եօթը տնօրէններ:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	U	ʁ	b	U	U	ʁ	U	U	U	ʁ	U
2	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U
3	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U
4	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U
5	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U
6	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U
7	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U
8	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U
9	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U
10	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U
11	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U	ʁ	U

ԼՈՒԾՈՒՄԸ

